№ 238 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 238

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝
ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կարճատև, սակայն ծանր հիւանդութիւնից յետոյ, հոկտեմբերի 19-ին վախճանվեց

Խաչատուր Օհանեսեան ՎԻԼՎԻԼԵԱՆՑԸ,

որի մասին խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի կինը՝ Աննա Զաքարեան իր որդու՝ Միքայէլ Խաչատրեանցի և միւս զաւակների հետ միասին, նոյնպէս և եղբօր-որդի Ալէքսանդր Համբարձումեան Վիլվիլեանցը: Ամրիծքը այսօր, չորեքշաբթի, երեկոյեան ժամը $6^{1}/_{2}$-ին իր սեփական տանը (Արղութեան փող. № 13): Մարմնի յուղարկաւորութիւնը վաղը, հինգշաբթի, առաւօտեան ժամը $10^{1}/_{2}$-ին բնակարանից դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 950. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԿՈՂՄԻՑ.

Ի նկատի ունենալով, որ վերջին ժամանակներս Թիֆլիսում զգալի կերպով երեւան են եկել որովայնային տիֆ և ծաղիկ հիւանդութիւնները, պարտք եմ համարում յայտնել Թիֆլիսի հասարակութեանը, որ չափազանց անհրաժեշտ է, ներկայ պատերազմական ժամանակի պատճառով, հէնց սկզբից խեղդել այդ հիւանդութիւնների տարածումը: Դրա համար և ես անհրաժեշտ գտայ դիմել հասարակութեանը հետևեալ խնդրքով.

1) Խնդրում եմ Թիֆլիսի պ. պ. բժիշկներին, բոլոր հիւանդանոցներին և քաղաքի բնակիչներին խսկոյն և եթ հաղորդել քաղաքային բժշկա-սանիտարական բիւրօյին որևէ վարակիչ հիւանդութիւնների դէպքերի մասին, որոնց թւում նաև որովայնային տիֆի և ծաղկի մասին, որպէս զի կարելի լինի սանիտարական հսկողութեան կողմից ժամանակին ձեռք առնել համապատասխան անհրաժեշտ միջոցներ:

2) Առաջարկում եմ ազգաբնակութեանը ըստ կարելոյն գործ ածել եռացրած կամ զտված ջուր (այդ նպատակով յանձնարարում եմ ունենալ «Բերկֆելդի» զտիչը):

3) Խնդրում եմ ազգաբնակութեանը ընդարձակ կերպով կատարել ծաղկի պատուաստումն և ռէվակցինացիա՝ Ծաղկի պատուաստման համար ազգաբնակութիւնը կարող է օգտվել քաղաքային հիւանդանոցներից, ուր կը կատարեն այդ ձրիաբար:

4) Խնդրում եմ հասարակական հիմնարկութիւններին, ակումբներին, հիւրանոցների ու ճաշարանների տէրերին և այլն, յաճախորդներին մատակարարել բացառապէս եռացրած կամ զտված ջուր, որի համար և յանձնարարում եմ ունենալ «Բերկֆելդի» զտիչ:

առ. 948. 3—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Այսօր, չորեքշաբթի,
հոկտեմբերի 22-ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄ. ԸՆԿ.
ԽՈՒՄԲԸ
կը ներկայացնէ—ՇԻՐՎԱՆ-ԶԱԴԷի
ՉԱՐ ՈԳԻ
Դրամա 4 արարուածով:
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Աշխէն, Ժասմէն, Մանուչարեան, Մարի, Ցամիկ, Ղարախանեան, պ. պ. ԱԲԵԼԵԱՆ, Ալիխանեան Իս., Աւետեան, Մանուէլեան, Միրզոյեան և ուրիշները:
Ռեժիսսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Սկիզբը երեկ. ժամը 8-ին:
Տեղերի գները 50—4 կ.:
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Ա. ԷԼԻԶԲԱՐԵԱՆ և Ե. ԽԱՐԱԶԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՅԹԻ $3^{0}/_{0}$-Ը ՅԱՏԿԱՑՎԱԾ Է ՊԱՀԵՍՏԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՕԳՏԻՆ:
առ. 949. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզնէրի:
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6: Սոլոլակ, Բոլիչէևսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելէֆօն 10—58.
(չ. ու. կ.) առ. 875. 50—16

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՋԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի:
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը նրբափողոցից:
առ. (ա. օ.) 0—42 804.

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

(Պաշտօնական)

(Պետ. Հեռ. Գործ.)

20 հոկտեմբերի

Ողորմութեամբն Աստուծոյ Մենք, Նիկոլայ Երկրորդ, Կայսր և Ինքնակալ համայն Ռուսիոյ, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիայի և այլն, և այլն, և այլն, յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին:

Ռուսաստանի դէմ մինչև այժմ մղած անզօր կռւի մէջ ձգտելով բոլոր միջոցներով կրկնապատկել իրանց ույժերը, Գերմանիան և Աւստրո-Ունգարիան դիմեցին օսմանեան կառավարութեան օգնութեան և պատերազմի գիրկը նետեցին մեր դէմ նրանցից կուրացած Թիւրքիային: Գերմանացիների ղեկավարութեամբ Թիւրքաց նաւատորմը համարձակվեց դաւադրութեամբ յարձակվել Սև ծովի մեր ափի վրա: Դրանից անմիջապէս յետոյ Մենք հրամայեցինք Ցարգրադի ռուսական դեսպանին՝ դեսպանատան և հիւպատոսարանների բոլոր պաշտօնեաների հետ միասին մեկնել Թիւրքիայի սահմաններից:

Լիակատար հանգստութեամբ ու յուսալով Աստուծոյ օգնութեանը կընդունէ Ռուսաստանը իր դէմ ուղղված այս նոր քայլը քրիստոնէական հաւատի և բոլոր սլաւոն ժողովուրդների վաղեմի հարստահարողի կողմից:

Առաջին անգամը չէ, որ յաղթական ռուսական զէնքը պէտք է զարկէ Թիւրքական հրոսակախմբերին, կը սանձէ նա այս անգամ ևս մեր հայրենիքի յանդուգն թշնամուն:

Բովանդակ ռուս ժողովրդի հետ ի մի Մենք անյողդողդ հաւատում ենք, որ Թիւրքիայի ներկայ անմիտ միջամտութիւնը պատերազմական գործողութիւններին միայն կարագացնէ նրա համար օրհասական դէպքերի ընթացքը և ճանապարհ կը բանայ Ռուսաստանին լուծելու իր նախնիքներից ստացած պատմական խնդիրները Սև ծովի ափերում:

Տրված է Ցարսկոէ Սէլօյում հոկտ. 20-ին, 1914 թ., Մեր Թագաւորութեան 20-րդ տարում:

Իսկականի վրա նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրված է՝

«ՆԻԿՈԼԱՅ»

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

20 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական: Օսմանեան հաւատարմատարը հոկտեմբերի 19 ին կարդաց արտաքին գործերի մինիստրին մեծ վեզիրից ստացված հետևեալ հեռագիրը.

«Հաղորդեցէք արտաքին գործերի մինիստր Սազօնովին, որ մենք խորապէս ցաւում ենք, որ ռուսաց նաւատորմի յարուցած թշնամական ակտը խախտեց երկու մեծ պետութիւնների բարեկամական յարաբերութիւնները: Դուք կարող էք վստահեցնել ռուսական Կայսերական կառավարութեանը, որ Բ. Դուռը ամեն միջոց ձեռք կառնէ վերջ դնելու այդ տեսակ դէպքերի կրկնողութեան հնարաւորութեան: Դուք կարող էք այժմ իսկ յայտնել արտաքին գործերի պ. մինիստրին, որ Թիւրքաց կառավարութիւնը վճռել է արգելել նաւատորմին մտնել Սև ծովը և որ մենք մեր հերթին յոյս ունենք, թէ ռուսաց նաւատորմը չի լողայ մեր ափերի մօտ: Ես հաստատ յոյս ունեմ, որ Կայսերական ռուսական կառավարութիւնը ցոյց կը տայ այս գործում նոյն տեսակ հաշտարար ոգի, ինչպէս մենք, յանուն երկու երկիրների»:

Այս հեռագիրը լսելուց յետոյ, արտաքին գործերի մինիստրը պատասխանեց Թիւրքաց հաւատարմատարին, որ նա կտրուկ կերպով հերքում է, թէ թշնամական նախաձեռնութիւնը բղխեց մեր նաւատորմի կողմից և գտնում է, որ այժմ ուշ է որևէ բանակցութիւն վարել:

«Եթէ, — յարակցեց մինիստրը, — Թիւրքիան արտաքսէր անմիջապէս առանց բացառութեան բոլոր գերմանացի զինւորական և ծովային պաշտօնեաներին, այն ժամանակ կարելի էր տակաւին բանակցութիւնների ձեռնարկել մեր ծովափի վրա գործված դաւաճանական յարձակման համար գոհացումն ստանալու մասին»: Ի նկատի ունենալով, որ օսմանեան հաւատարմատարի արած յայտարարութիւնը ոչնչով չէ փոխում ստեղծված դրութիւնը, ուստի մինիստրը վերջում ասաց Ֆախրէդդինին, որ նա կը ստանայ անցագրերը հետևեալ օրն ևեթ Պետրօգրադից մեկնելու համար:

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Պետրօգրադից հաղորդում են, որ Թիւրքաց կառավարութիւնը չէ արտաքսելու երրեակ համաձայնութեան հպատակներին, բայց և արգելք չէ լինելու նրանց, որոնք կը ցանկանան մեկնել:

Թիւրքաց կառավարութիւնը ձեռք է առել անհրաժեշտ միջոցներ Զմիւռնիայի պաշտպանութեան համար:

2000 զինված բէդուիններ անցել են եգիպտական սահմանը:

ՕԴԵՍՍԱ.—Գեներալ Նիկիտինը հրատարակել է հետևեալ կոչը, ուղղված Հարաւ-Ռուսական երկրի ազգաբնակութեանը. «Հասաւ մեր ժամը ևս: Մոռանալով անցեալի ծանր դասերը, գերմանական դաւերի ազդեցութեան տակ Թիւրքիան հանդէս եկաւ մեր դէմ և կամենում է նորից իր ույժերը չափել մեր մեծ հայրենիքի հետ: Թիւրքերը յոյս ունեն, որ Ռուսաստանը, պատերազմելով արևմուտքում, կարող չի լինի ներհակել հարուածը հարաւում, բայց նրանք սխալվում են: Մեծ են մեր ույժերը. նրանք այնքան են, որ կարող են նորից լաւ խրատ տալ մեր դարաւոր թշնամուն: Թիւրքերը յարձակվեցին մեր ծովափնեայ քաղաքների վրա և, գուցէ, փորձում են զօրք իջեցնել Սև ծովի ափերում: Եթէ այդ տեղի է ունեցել, խաղաղ ազգաբնակութիւնը պէտք է լիակատար հանգստութիւն պահէ, հաստատ հաւատալով մեր զինված ույժերի անպարտելի յաղթութեանը: Զօրքը հոգում է ձեր մասին և, չը խնայելով իր կեանքը, կը պաշտպանէ ձեր ամբողջութիւնը. սակայն նախազգուշացնում եմ, որ իմ կարգադրութիւնները ու պահանջները պէտք է կատարվեն անմիջապէս և առանց առարկութեան: Զանցառուները կը պատժվեն պատերազմական ժամանակի օրէնքներով»:

ԹԷՀՐԱՆ. — Լրագիրներում տպված է Թիւրքաց կառավարութեան հետևեալ հաղորդագրութիւնը. «Թիւրքիան պատերազմական գործողութիւններ ընդդէմ Ռուսաստանի չը սկսեց: Դէպի ռուսական ծովափը դիմած ռազմանաւերը՝ գերմանական էին, գերմանացի նաւաստիներով»: Անկասկած, Թիւրքերը աշխատում են որպէսզի պատերազմը յայտարարէ Ռուսաստանը, յուսալով թէ այդպիսով ձեռք կը բերեն մահմեդականների համակրութիւնը: Տեղիս ղեկավար շրջանները հանգիստ են. ոչ մի ցուցում չը կայ այն մասին, թէ Պարսկաստանը կարող է երբևէ հարվել Թիւրքիայի կողմը:

ՊՕԼՏԱՎԱ.—Ռէալական դպրոցի և գիմնազիաների աշակերտները իրանց նուագախմբերով սեմինարիայի աշակերտների հետ հակակայական ցոյց կազմեցին մեր զօրքի յաղթութեան և Թիւրքիայի հանդէս գալու առիթով Պօլտավայի յաղթութեան արձանի մօտ, որտեղից ցուցարարներն անցան քաղաքի միջով, տանելով առջևից Կայսրի պատկերը:

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Տեղիս պարսկական միսիան խնդրում է յայտնել, որ ոչ մի դաշինք Պարսկաստանի և Թիւրքիայի միջև գոյութիւն չունի և արտասահմանեան ու ռուսական մամուլի մէջ տպվող այդ մասին լուրերը անհիմն են ու մտացածին:

ԲՈՒԽԱՐԵՍՏ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ մի քանի յունական եկեղեցիներ և դպրոցներ դարձրել են զօրանոցներ: Շարունակվում է յոյների և հայերի հալածանքը: Տեղի են ունեցել մասսայական ձերբակալութիւններ: Մի քանի մարդ աքսորվել են Փոքր-Ասիա: Երիտասարդ թիւրքերը ահաբեկման սիստեմն են սահմանել: Թիւրք ազգաբնակութիւնը դժգոհ է ստեղծված դրութիւնից և վախեցած է երրեակ համաձայնութեան պետութեան կտրուկ գործողութիւններից: Թիւրքաց մամուլը շարունակում է ռուս-թիւրքական միջադէպի պատասխանատուութիւնը ձգել Ռուսաստանի վրա և յայտնում է, որ վերջինս—հասարակ թիւրիմացութիւն է, որը կարելի է հարթել բարեկամաբար մի երրորդ մեծ պետութեան միջնորդութեամբ:

ՊԵՐՕԳՐԱԴ.—Ժամը 12-ի սկզբին Ֆինլանդական երկաթուղագծով մեկնեց Թիւրքաց դեսպանութիւնը Ֆահրէդդինի գլխաւորութեամբ:

ԹԵՕԴՕՍԻԱ.—Թիւրքաց հիւպատոս Բէբուրէն հրաժարվեց Թիւրքաց հիւպատոսի պաշտօնից:

ԲՈՒԽԱՐԵՍՏ. — Պաշտօնական «Վիկտորուլի» մէջ տպված է Կ. Պոլսից, հոկտ. 12-ին ուղարկված մի հեռագիր, որի մէջ ասված է, թէ զինւորական մինիստրութեան մէջ կայացաւ երկարատև խորհրդակցութիւն մեծ վէզիրի և պարսից դեսպանի միջև Էնվէր-փաշայի ներկայութեամբ: Դեսպանին համոզում էին, թէ անհրաժեշտ է Պարսկաստանն էլ հանդէս գայ ընդդէմ Ռուսաստանի, որովհետև ներկայ բոպէն անհամեմատ յարմար է ազատվելու համար Ռուսաստանի և Անգլիայի խնամակալութիւնից:

ԲՕՐԴՕ.—Ֆրանսիական կառավարութիւնը հրատարակեց մի դեկլարացիա, որի մէջ ասված է, թէ պատերազմի սկզբում նա հաւատիացրեց Բ. Դրանը, որ ռուսաց և մեծ բրիտանական կառավարութիւնների նման նա կը պահէ չէզոքութիւն: Դժբաղդաբար, Թիւրքաց ույժերը թշնամական գործողութիւններ սկսեցին Ռուսաստանի դէմ առանց նախազգուշացման և առանց որևէ մարտահրաւէրի վերջինիս կողմից: Ֆրանսիան և Անգլիան, յուսալով թէ այդ թշնամական ակտերի համար պատասխանատու են գերման օֆիցէրները, առաջարկեցին Թիւրքիային հրաժարվել Բեռլինի հետ համերաշխ գործելուց և անմիջապէս պաշտօնանկ անել բոլոր գերման օֆիցէրներին. սակայն Թիւրքիան բաւականացաւ սոսկ յետ կանչելով իր շոգենաւերը և ցանկութիւն յայտնեց խաղաղ յարաբերութիւններ պահպանել Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի հետ: Երրեակ համաձայնութեան պետութիւնները վճռեցին, որ ներկայ պայմաններում Թիւրքիան հազիւ թէ կարողանայ պասիվ մնալ, այդ պատճառով էլ երրեակ համաձայնութեան պետութիւնների դեսպանները հոկտ. 18-ին պահանջեցին իրանց անցագրերը:

Հիւսիսային Աֆրիկայից տեղեկացնում են, որ մահմեդական աշխարհը համերաշխ չէ Թիւրքիայի հետ:

ԲՕՐԴՕ.—Միացեալ Պետութիւնների Կ. Պոլսի դեսպանը իր վրա ընդունեց Թիւրքիայում Ֆրանսիական շահերի պաշտպանութիւնը:

ԼՕՆԴՕՆ. — Րէյտէրի գործակալութեանը հաղորդում են, որ վերջին մի քանի օրվայ ընթացքում բրիտանական, ֆրանսիական և ռուսական հպատակներն շտապով հեռացան Կ. Պոլսից:

Սուլթանը յայտնեց մեծ պետութիւններին, որ Բրիտանիայի գործելակերպը Եգիպտոսում զրկում է իրան սուվերէն իրաւունքներից: Խեդիվը, ըստ երևոյթին Բ. Դրան ազդեցութեան տակ, կամենում է պահանջել Մեծ-Բրիտանիայից բացատրութիւն իր գործողութիւնների մասին:

Սիմլայից ստացված հեռագրի համաձայն, Հնդկաստանի ազգաբնակութիւնը իրազեկ է արված Թիւրքիայի թշնամական գործելակերպի մասին Անգլիայի վերաբերութեամբ: Կառավարական հաղորդագրութեան մէջ փոխարքան ցաւ է յայտնում, որ Թիւրքիայի շովինիստ տրամադրված տարրերը աշխատում են թիւրքերին դրդել՝ սկսելու բացարձակօրէն պատերազմական գործողութիւններ Անգլիայի դէմ յանուն Գերմանիայի և Աւստրիայի շահերի, Թիւրքիայի այդ դարաւոր թշնամիների: Մահմեդական լիդէրները միտինգներ են կազմում Անգլիային աջակցելու նպատակով: Մահմեդական վերջին տօնակատարութիւնների ժամանակ մզկիթներում աղօթք էր կարդացվում անգլիացիներին յաղթութիւն շնորհելու մասին, ինչպէս և այն մասին, որ Թիւրքիան պէտք է չէզոք մնայ և միանայ դաշնակիցներին:

ՕՐԷՆԲՈՒՐԳ. — Տեղական մահմեդականները 50 մահճակալով իրանց հիւանդանոցը բանալիս խնդրեցին զօրահրամանատարին առ ոտս Թագաւոր Կայսրի արկանել հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ և յայտնել նրանց զայրոյթը Թիւրքիայի յարձակման առիթով:

ՀՌՈՄ.—Քաղաքական շրջաններում կարծում են, որ Թիւրքիայի թշնամական քայլը երրեակ համաձայնութեան դէմ սպառնում է Իտալիայի շահերին Էրիտրէյ և Սոմալիլէնդա գաղութներում, որոնք կարող են կտրվել Իտալիայից:

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

19 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

«Արևելա-պրուսական զօրաճակատում մեր զօրքերը վանեցին Վլադիսլավօվի վրա գործված յարձակումները և գերմանացիներին հանեցին արևելեան դիրքերից, նաև առաջացան Բայգրօդի լճից դէպի հիւսիս:

«Վիսլայի այն կողմը մեր զօրքերը անարգել շարունակում են առաջանալ, և միայն Օպատովի շրջանում աւստրիացիք փորձեցին դիմադրել մեծ ույժերով, բայց ցիրուցան արվեցին: Օպատէվկա գետի այն կողմը երևան հանվեց աւստրիացիներից ամրացրված դիրք:

«Գալիցիայում, Սան գետի ձախ ափում մեր զօրքերը ներս խուժեցին Նիզկօ գիւղը և այդ շրջանում յամառ կռիւ սկսեցին: Մնացած զօրաճակատում դրութիւնը նոյնն է»:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ)

19 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.

«Գերմանացի օֆիցէրի մօտ գտնված հրամանները ցոյց են տալիս, որ գերմանացիք հիւսիսում ջանքեր են գործ դնում վճռական գործողութիւնների համար: Լեկէնուասանտէրի առումը, որի մասին հաղորդվեց երէկ, փայլուն գործ էր: Ֆրանսիական զօրքերը ձեռք ձգեցին երկու թնդանօթ, բազմաթիւ գնդակացիրներ և մօտ 100 գերի:

«Երէկ ֆրանսիացի աէրօպլաններին աջողվեց գնդակահարել գերմանական «Տաուբէ» աէրօպլանին, որն ընկաւ գերմանական ռազմագծի վրա»:

Պաշտօնապէս յայտարարվում է, որ Բելգիայից ոչ մի տեղեկութիւն ստացված չէ: Օրվայ ընթացքում մենք վանեցինք թշնամու կատաղի յարձակումները Լիգօնի-Կէնուաէնսանտէրի շրջանում և Արգօններում: Մենք շարունակեցինք Սուէնից դէպի հիւսիս դանդաղ առաջանալ: Վօգէզներում, շնորհիւ մեր արշաւին, մենք ձեռք ձգեցինք Սէնտ-Մարիի մօտի բարձունքները:

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական: Ձախ զօրաթևում գերմանացիք երէկ յարձակման դիմեցին ինչպէս Բելգիայում, այնպէս և Հիւսիսային Ֆրանսիայում, մանաւանդ Դիկսմիւնդէի և Լիսի միջև: Չը նայած գերմանացիների յարձակումներին, մենք թեթև առաջացանք ամբողջ զօրաճակատում, բացի Մէսսին գիւղից, որի մի մասը դաշնակիցները զիջեցին: Թշնամին ճիգ գործ դրեց գրաւել Արրասի արուարձանները և փորձեց յարձակւում գործել Լիլյոնի և Լէկկէնու-Անսամտէրըրի դէմ, բայց անաջող։ Էնի շըրջանում մենք մասամբ առաջացել ենք Տրասիլվայլի ուղղութեամբ, նաև Էնի աջ ափի մի քանի տեղում։ Ռօնվայի մօտերը գերմանացիների կորուկ յարձակումները մեր զօրքերի դէմ անաջողութիւն կրեցին։ Րէյմսի շրջանում, Արգօնների և Մասսի միջև և Մասսի աջ ափում գերմանացիք երէկ ուժեղ թնդանօթաձգութիւն էին սկսել, որը սակայն այնքան էլ աջող հետևանքներ չունեցաւ։ Վօգէզներում մենք նորից տիրեցինք լեռնանցքների վրա իշխող բարձունքներին։ Սէն-Մարի մօտ մենք առաջացել ենք Վանդիզէի շրջանում, ուր մեր գրաւած դիրքը ենթարկվեց թշնամու ռմբակոծութեանը։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

17—19 հոկտեմբերի

ՀՌՈՄ.—«Դանկօլօ» ռազմանաւը երեք օր առաջ զօրք իջեցրեց Սասէնօ կղզում, Վալօնի նաւահանգստի մուտքի մօտ։

ՀՌՈՄ.—Բօլօնի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտը հրաւիրեց պրօֆ. Մակսիմ Կովալևսկուն՝ դասախօսութիւններ կարդալ այն յոյսով, որ իտալական կառավարութեան աջակցութեամբ նրան թոյլ կը տրվի ապրել Իտալիայում։

ԲՈՐԴՕ.—Կառավարութիւնը բէլգիական թագաւորին ուղարկեց շքադրամներ և խաչեր բէլգիացի զինւորների համար։

ՎԱՐՇԱՎԱ.—Մեր մուտքը Լօձ ազգաբնակութիւնից ընդունվեց խանդավառութեամբ։ Պետրօկովում գերմանացիք թողել էին շատ գերիներ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Թագաւոր Կայսրը հրամայել բարեհաճեց, որպէսզի ներկայ պատերազմի կարևորագոյն դէպքերը յաւերժանան եկեղեցական հանդէսներով զինւորական մինիստրի հաղորդագրութիւնը ստանալուց յետոյ։

ՄՕՍԿՎԱ.—Մոսկվայի վաճառականութեան ժողովում կարդացվեց Թագաւոր Կայսրի հետևեալ պատասխան հեռագիրը.

«Հաղորդեցէք Մոսկվայի վաճառականութեանը, որ Ես անկեղծօրէն գնահատում և համակարծիք եմ Ինձ ուղղված նրա զգացմունքին՝ թէ ոչ մի հաշտութեան բանակցութիւն չի սկսվի մեր կողմից մինչև մեր թշնամու լիակատար ջախջախումը։ ՆԻԿՈԼԱՅ»

ՆԻՒ-ԵՈՐԿ.—Րօկֆելլէրը մի միլիօն դօլար նուիրեց պատերազմող պետութիւնների խաղաղ ազգաբնակութեան և բէլգիացիների օգտին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Իգդիրից հոկտ. 20-ին, ցերեկ. ժամը 12-ից, հեռագրում են «Кавк. Сл.»-ին։

«Յարձակումը շարունակվում է ամբողջ զօրաճակատում։ Մեր զօրքերը վերցրին Միսունի և Արծափ գիւղերը և շարունակում են գնալ դէպի Բայազիդ, որի անկումը սպասվում է այսօր կամ վաղը։

«Պատերազմի դաշտում կան շատ սպանված և վիրաւոր ասկեարներ և համիդիականներ։

«Մեր արտիլէրիայի գործողութիւնները հրաշալի են։

«Թիւրքաց զօրքի ոգին ճնշված է։ Թիւրքերը անկարգ խմբերով փախուստի են դիմում։

«Մեր զօրքերը ոգևորված են։

«Սպասում ենք 200-ից աւելի գերի ասկեարների»։

◆ Իգդիրից ցերեկվայ ժամը 3 և 10 րոպէին հեռագրում են նոյն թերթին.

«Բայազիդից եկողները պատմում են, որ պատերազմի նախօրեակին Կ. Պօլսից յատկապէս Բայազիդ եկաւ երիտասարդ թիւրք Նաջիբ-բէյը և, գիշերները իրան կասկածելի թւացող մարդկանց ձեռք ակալելով, տեղն ու տեղը սպանում էր։

«Մեր զօրքերը առանց կռւի վերցրին Կօբուսը։

«Նահանգի ազգաբնակութեան մէջ մեծ ոգևորութիւն է տիրում։

«Կօզակների վաշտը մօտենում է Բայազիդին։

«Հայկական Արծափ, Կօրօն և Միսուն գիւղերը, մինչև մեր զօրքերի մտնելը, կողոպտվել են համիդիականների կողմից»։

◆ Իգդիրից ցերեկվայ ժամը 3 և 50 րոպէին հեռագրում են նոյն թերթին.

«Բայազիդ բերդը վերցրին մեր զօրքերը»։

◆ «Рус. Сл.»-ի ասելով, Թիւրքիայի կողմից պատերազմ սկսելը այն աստիճանի անսպասելի էր նոյնիսկ Պետրօգրադի թիւրքաց դեսպանատան համար, որ երևում է ի միջի այլոց այն փոքր իրողութիւնից, որ թիւրքաց հաւատարմատարը նոյնիսկ միայն վճարեց 20,000 րուբլի դեսպանատան վարձած շինութեան համար։

◆ «Бирж. Вѣд.»-ին հաղորդում է, որ Պետրօգրադի թիւրքաց դեսպանատան ժամանակաւոր կառավարիչ Ֆահրէդդին-բէյ, որ ամսիս 30-ին մեկնեց, չը վճարեց դեսպանատան ռուսահպատակ ծառայողներին չորս ամսվայ ռոճիկը, ասելով որ անհնար է Կ. Պօլսից դրամ ստանալ։ Ծառայողների պահանջին փող ստանալու մասին մի թիւրք դիպլօմատ ասել է. «Դուք ձեր հաշիւը կը ստանաք Օդեսայում այն ժամանակ, երբ թիւրքերը մտնեն այնտեղ»։ Ծառայողներից մէկը առարկել է, որ ռոճիկները կը ստանան այն ժամանակ, երբ ռուսաց զօրքերը մտնեն Կ. Պօլիս։ Այս նկատողութիւնը խիստ արտայայտութիւն առաջացրեց դիպլօմատի կողմից ռուս զօրքերի մասին։ Ծառայողը գրգռվեց և ապտակեց դիպլօմատին, որը հրամայեց քաղաքապահ կանչել, բայց վերջինս չը վճռեց մտնել դեսպանատուն։ Ծառայողները դիմեցին հաշտարար դատաւորին՝ պահանջելով իրանց ստանալիքը դրաւ դնելով դեսպանատան շարժական գոյքի վրայ։

◆ Պետրօգրադի քաղաքապետը կարգադրեց, որ թիւրքահպատակները մի շաբաթվայ մէջ հեռանան մայրաքաղաքից։

◆ «В. В.»-ին հեռագրում են Կ. Պօլսից, որ ականաւոր թիւրք քաղաքագէտները տեղեկութիւն չունէին այն վճռի մասին, որի ուժով Թիւրքիան պատերազմ սկսեց Ռուսաստանի դէմ։

◆ Բօլգար կառավարութիւնը զանազան կողմերից բարեկամական խորհուրդներ է ստանում պատերազմ սկսելու Թիւրքիայի դէմ։

◆ «Н. В.»-ն հաղորդում է, որ Պետրօգրադի օսմանեան դեսպանը դեսպանատան պաշտօնեաների հետ մեկնել է Հօլլանդիա հոկտ. 20-ի երեկոյեան՝ Ֆինլանդիայի վրայով։

◆ Զմիւռնիա—Կ. Պօլիս հեռագրագիծը անգլիական ստորջրեայ ռազմանաւը կտրել է։

◆ «Б. В.»-ի ասելով, անգլօ-ֆրանսիական նաւատորմը ռմբակոծում է Ասիական Թիւրքիայի ծովափը։

◆ Ցունաստանում յայտարարված է ընդհանուր զօրահաւաք։

◆ Ցամառ լուրեր են պտտում, թէ բուլգարական Ֆէրդինանդ թագաւորի դէմ մահափորձ է կատարվել։

◆ Թիւրքաց զօրքերը արշաւ են ձեռնարկել դէպի Եգիպտոս։

◆ Թիւրքիայից Իգդիր փախածները պատմում են, որ թիւրքաց կառավարութիւնը մի շարք բռնաբարող միջոցներ է ձեռք առել հայերի դէմ։ Թիւրք զօրքերին հրամայված է գնդակահարել սահմանում երևացող բոլոր հայերին։ Ամենուրեք ձերբակալվում են դաշնակցականները։ Կ. Պօլսում «Ազատամարտը» փակված է։ Հայ ասկեարները զինաթափ են արված, իւրաքանչիւր 30 հայ տուն պարտաւոր է պահել 120 ձիաւորի։

◆ Ցունական աղբիւրներից տեղեկացնում են, որ Սինոպում և Տրապիզոնում թիւրք իշխանութիւնները, թիւրքաց կառավարութեան կարգադրութեան համաձայն, խուզարկում են բոլոր մեկնող յոյներին և խլում են նրանցից ոսկէ դրամները, փոխարէնը տալով թղթադրամներ։

◆ «Р. Сл.»-ն յայտնում է հեղինակաւոր աղբիւրից, որ Ռումինիայի՝ ռուս-թիւրքական պատերազմին մասնակցելը կախված է այն դիրքից, որպիսին կը բռնէ Բօլգարիան։ Եթէ Բօլգարիան հանդէս գայ ընդդէմ Թիւրքիայի, այդ հնարաւորութիւն կը տայ Ռումինիային գրաւել Բուկօվինան և Տրանսիլվանիան։ Իսկ եթէ Բօլգարիան չէզոք մնայ, այն դէպքում Ռումինիան կը յետաձգէ իր միջամտութիւնը պատերազմին և միայն արթուն կերպով կը հսկէ բոլոր անցուդարձին։ Իսկ եթէ, հակառակ ամենի, Բօլգարիան յարձակում գործէ Սերբիայի կամ Ցունաստանի վրա, այն ժամանակ Ռումինիան հանդէս կը գայ Բօլգարիայի դէմ։ Պետրօգրադի ռումինական դեսպանը այցելելով արտաքին գործերի մինիստր Սազօնովին, հաւաստիացրել է նրան, որ ոչ մի պայմանագրով Ռումինիան կապված չէ Թիւրքիայի հետ և որ Թիւրքիայի թշնամական գործողութիւններին նա ոչ մի մասնակցութիւն ցոյց չի տայ։

◆ Լիլլի մօտ գերմանացիք կորցրին 20 հազար սպանված և վիրաւոր։

◆ Միացեալ Պետութիւնների դեսպանները Լօնդօնում, Բերլինում, Բրիւսէլում և Հաագայում առանձին մասնաժողով են հաստատել Ամերիկայից ուտեստեղէն հասցնելու Բէլգիայի համար։ Ալբէրտ թագաւորը յորդորում է փախստականներին հայրենիք վերադառնալ։

◆ Նիւպօրտի մօտ դաշնակիցները կորցրել են 12,000, գերմանացիք՝ 25,000 մարդ։

◆ Գերմանական «Էմդէն» ռազմանաւը Սինգապուրի մօտ ջրասուզել է և ռազմական մի նաւ։

◆ Գերմանական սօցիալիստների օրգանը կառավարութիւնից պահանջում է ընդհանուր ամնիստիա և ազատութիւն այն բանտարկեալների համար, որոնք կը մտնեն գործող բանակի մէջ։ Միևնոյն թերթը գրում է, թէ Ունգարիայում խիստ հալածանք է սկսվել սօցիալիստների լիդերների դէմ։

◆ Բօլգարիան Սերբիայից պահանջել է լուծել վերջնապէս մակեդոնական հարցը։

◆ «Թայմսի» տեղեկութիւնների համաձայն, Ֆրանսիայի և Բէլգիայի զանազան քաղաքներից Գերմանիան պահանջել է մինչև օրս մօտ 450 միլիօն րուբլի պատերազմական տուգանք։

◆ Պետրօգրադում պատրաստվում են նոր տեսակի նամակադրօշմեր, որոնք փոխարինելու են յօբելեանական նամակադրօշմերին։

ՆԵՐԿԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾԱԳՈՒՄԸ

Պրօֆ. Մ. Ա. Կօտլեարևսկին Մոսկվայի համալսարանում կարդացել է մի դասախօսութիւն «Ներկայ պատերազմի ծագումը» բնաբանով։

Չը նայած անցքերի ծաւալման արագութեան և յանկարծակի լինելուն, որ անմիջապէս հասցրին պատերազմական գործողութիւններին, ներկայ պատերազմը չէ հանդիսանում պատահական հետևանք դիպլօմատիական որևէ բարդութեան, այլ բղխում է միջազգային յարաբերութիւնների այդ էութիւնից և XIX դարի վերջի և XX դարի սկզբի ընթացքում ունեցած նրա զարգացումից։

Եւրոպական պետութիւնների խմբաւորումը այդ ժամանակ փոխվում է մեր ներկայ թշնամիների համար ոչ նպաստաւոր կերպով։

Գերմանիան, շարունակ աճելով ազգաբնակութեամբ և անընդհատ զարգացնելով իր արդիւնաբերութիւնը, հարկադրված է դուրս գալ իր նեղ սահմաններից, հողեր որոնել գաղութների համար և շուկաներ՝ իր արդիւնաբերութեան մթերքները վաճառելու։ Նրա ջանքերը այդ ուղղութեամբ աւելի վտանգաւոր են դառնում Անգլիայի առևտրական և ռազմական հզօրութեան համար, որը հարկադրված է դուրս գալ իր հպարտ «splendid isolation» մենութիւնից. Նա սկսում է յարաբերութեան ազատ ճանապարհներ որոնել իր գաղութների համար, և իրան համար աւելի յարմար դիրք է ընտրում պետութիւնների կազմված խմբաւորման մէջ։

Ճապօնական պատերազմի հետևանքները ցոյց տուին, որ Անգլիան, մի կողմից, հաշւի է առնում Ռուսաստանի ուժեղացումը Ասիայում, միւս կողմից էլ, հաշւի չէր առնում Ճապօնիայի և Չինաստանի ոյժը։ Այդ հանգամանքը թուլացրեց դէպի Ռուսաստանը եղած աւանդական անվստահութիւնը և հնարաւոր դարձրեց ներկայ դաշնակցութիւնը նրա հետ։

Միևնոյն ժամանակ Իտալիան աւելի համոզված է, որ Ֆրանսիայի վերաբերմամբ իր ունեցած երկիւղի երազանքներն ի զուր են և վերջինիս գաղութային տիրապետութիւնները Աֆրիկայում առաջ չեն գնում և Իտալիայի շահերին վտանգ չեն սպառնում, իսկ ներքին հակակղերական քաղաքականութիւնը ոչնչացնում է Ֆրանսիային պաշտպանելու վտանգը։ Մինչդեռ Աւստրո-Ունգարիայի բալկանեան քաղաքականութիւնը սկսում է աւելի սպառնալի դառնալ իտալական առևտրի շահերին։

Անգլիայի և Գերմանիայի մրցութիւնը առաջացնում է սպառազինման հսկայական աճեցում, որը Գերմանիայի համար, վերջապէս, դրեթէ անտանելի է դառնում։

Մշտապէս գերազանցութիւն ունենալով Ֆրանսիայի նկատմամբ, Գերմանիան տեսնում է Ռուսաստանի հզօրութեան անընդհատ աճումը, մի հզօրութիւն, որ Գերմանիայի համար մշտական անհանգստութեան և երկիւղի աղբիւր է դառնում։

Աւստրո-Ունգարիայի դուալիստական միապետութիւնը չէ կարողանում հաշտեցնել իր երկրում ապրող ժողովուրդների իրար հակասող շահերը։ Այդ երկրի խոցերից մէկը հանդիսանում է թւականօրէն աննշան մաջարական ցեղի անչափ մեծ քաղաքական կշիռը։

Տիրող ճգնաժամից դուրս գալու միակ ելքը Աւստրիայի, նոյնպէս և Գերմանիայի համար կը հանդիսանար արտաքին յաղթական պատերազմը, և որքան շուտ բռնկէր պատերազմը, այնքան այդ ձեռնտու կը լինէր նրանց համար։

Այսպէս է ստեղծվում «շահակալական պատերազմի» գաղափարը։ Բալկաններում եղած անցքերը միայն առիթ են, եթէ այդ էլ չը լինէր, կը ստեղծվէր մի ուրիշը, որովհետև պատերազմի բոլոր նախանշանները կային արդէն։

Այս պատերազմի հետևանքները բարեբեր կարող են համարվել միայն գերմանական միլիտարիզմը ոչնչացնելու դէպքում. Թէև չէ կարելի յոյս դնել, որ այս վերջին պատերազմն է, բայց և այնպէս Գերմանիայի հզօրութեան ջախջախումը մի նշանաւոր քայլ կը լինէր դէպի առաջ՝ ընդհանուր խաղաղութիւն ստեղծելու գործում։ Այն խաղաղութիւնը, որ կը կնքվէր այս ջարդից առաջ, հաստատ չէր կարող լինել։

Ամբողջ Ռուսաստանը այժմ միայն թիկունքն է մեր բանակի, և մեր բոլոր ոյժերը պէտք է նուիրենք նրան օգնելու և պաշտպանելու գործին։

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՐՈՊԷ

«A toi nos coeurs, e toi nos bras,
A toi notre sang, o Patrie!
Nous le jurons tous: tu vivras».

Ժամը հնչեց. լարված սպասողական դրութիւնը ելք ստացաւ. մենք պատերազմում ենք Թիւրքիայի հետ.

Մեծ է և խորհրդաւոր րոպէն։

Մենք կանգնած ենք մեր դարաւոր, պատմական թշնամու հանդէպ, որ տզրուկի պէս շարունակ ծծել է հայի արիւնը, քանդել է հայի տունը, ոտնատակ տուել հայի պատիւը. մենք կանգնած ենք մեր ոխերիմ թշնամու դիմաց, լցված բուռն ատելութեամբ և անսահման պայքարով։

Հասել է վրէժխնդրութեան ժամը։

Մենք շատ ենք տառապել թիւրքական լծից. շատ ենք արիւն արտասուք թափել, հարիւր հազարաւոր զոհեր տուել. Թիւրքահայաստանի ամեն մի թիզ հողը ներկված է հայի արիւնով, հայի արցունքով ողողված։

Արիւնաքամ հայութիւնը շատ անգամ է զէնքի ձեռք առել անարգ ստրկութեան շղթաները փշրելու, բայց... մենք մենակ էինք և թոյլ... Այժմ հանգամանքները փոխվել են. ռուսական հզօր բանակը մեզ թիկունք։

Հասել է փրկութեան ժամը, թիւրքահայերի ազատագրութեան րոպէն։

Ճակատագրական րոպէն։

Հայկական աշխարհի «լինել չը լինելու» խնդիրն է դրված։

Այժմ կամ երբէք։

Մեռնել կամ պատւով ապրել։

Մեր կռիւը գաղափարական է և ճակատագրական։ Մենք կռւում ենք յանուն գաղափարի, որ փայփայել ենք տասնեակ տարիների ընթացքում. մենք կռւում ենք յանուն իրաւունքի, ազատութեան, քաղաքակրթութեան. այդ սրբազան կռւում մենք կը լարենք մեր ամբողջ ոյժը. մենք ոտքի կը կանգնենք մի մարդ, մի հոգի դարձած, բոլորս անխտիր, կին և տղամարդ, հարուստ և աղքատ, կը լարենք մեր ֆիզիքական, նիւթական և հոգեկան կարողութիւնը. մենք ամեն բան կը զոհաբերենք այդ վեհ նպատակին՝ մեր կեանքը, մեր նիւթական կարողութիւնը և... մենք կը յաղթենք։

Մենք պէտք է յաղթենք։

Մենք հաւատում ենք ռուսաց զէնքի յաղթանակին, հաւատում ենք «Ազատ Դարդանէլի» և «Ազատ Հայաստանի» ստեղծվելուն։

Երբ կը տապալվի ազատ զարգացման դարաւոր թշնամին, կը խորտակվի մանր ազգութիւնների արիւնածարաւ բռնապետը, երբ ռուսաց յաղթական զօրքը կը գրաւէ Թիւրքահայաստանը, մեր պատմական վրէժխնդրութիւնը յագեցած կը լինի։

Այս պատմական րոպէին՝ ամբողջ հայութիւնը, Արաքսի ափերից մինչև Վանայ լիճը, Արարատեան աշխարհից մինչև Կիլիկիայի բարձունքները, օրհնում, ողջունում է ռուսական զօրքը. հայութիւնը հաւատում է, որ ռուսական հզօր բանակի առաջ կը սասկան Աբդուլ-Համիդի ժառանգները, կը խորտակվեն զօրաւոր բռնութիւնների պարիսպները և նրանց աւերակների վրա նոր կեանք կը ստեղծվի, իրաւունքի, ազատութեան, քաղաքակրթութեան հիմունքներով։

Սօֆիա Դանիէլ-Բէկ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

I

Յիշում եմ, մօտ տասն տարի առաջ, աշակերտ ժամանակս, մեր ամենքի խորին յարգանքը վայելող պատմութեան դասատու Հ-ը ֆրանկօ-պրուսական անեղ պատերազմի մասին նուիրած զրոյցն սկսեց հետևեալ խորհրդաւոր բնաբանով.

— Տղաներ, լաւ լսեցէք, թէ ինչպէս «գերմանական ուսուցիչը յաղթեց հզօր Ֆրանսիային»...

Դասարանում տիրեց խորին լռութիւն. մենք, աշակերտներս սեղմվելով իրար՝ անձկալի հետաքրքրութեամբ և լարված ուշադրութեամբ հետևեցինք ամբողջ պատմութեան... Մեր ուսուցիչն իր բնաւորութեան ու զգացմունքներին յատուկ ոգևորիչ տոնով ու պատկերաւոր ոճով նկարագրեց Գերմանիայի միութեան ու հզօրութեան նախապայմանները, գերման ժողովրդի ազգային ինքնագիտակցութեան ու ինքնաճանաչման խիզախ փորձերը, առանձնապէս շեշտեց այդ երկրում սերմանված ու պատուաստված կուլտուրայի կենսաբեր ծլեր, քաղաքակրթութեան խոշոր նուաճումները, ժողովրդական դպրոցի անփոխարինելի դերը։ Առաջ եկաւ մեր դասարանում մանկական անսահման ոգևորութիւն ու անվերջ ծափեր։ Բայց երբ այդ կենդանի զրոյցի մէջ պատկերացաւ Գերմանիայի տիրապետող դասակարգերի՝ ազնուականութեան և բուրժուազիայի քաղաքական ձգտումները, տնտեսական անյագ տենչերը և այդ ուղղութեան որպէս անմիջական հետևանք՝ ֆրանս-պրուսական եղբայրասպան պատերազմը, «երկաթեայ կանցլէրի», «արիւնով պարուրված կարմիր բէկլեցօնների» քաղաքական սխրագործութիւնները և գերման դիպլօմատիայի անլուր դաւերը, դասարանի բարձրացած տրամադրութիւնը միանգամից ընկաւ, նախորդ ոգևորող ու յուզող տպաւորութիւնները աստիճանաբար նսեմանալով պատանեկական ուղեղներից բոլորովին հալվեցին ու կորան, մեր զգայուն ոգին ու թարմ միտքը հակակրական ցայտեր և վրդովմունքի նշաններ ցոյց տուին, ծագեց աշակերտական բուռն հարցասիրութիւն, որ երկարելով փոխվեց կրքոտ ընդդիմախօսութեան... Զանգը տուին։ Դասը վերջացաւ. Իսկ մինչ այդ մեր պատմութեան դասատուն չը կարողացաւ իր փոքրիկ ունկնդիրներին ապացուցանել, «թէ ինչպէս գերմանական ուսուցիչը յաղթեց հզօր Ֆրանսիային»...

Այդ պատմական խորիմաստ դարձուածքը դառաւ 40 տարի շարունակ ճնշված ու ենթակայ ազգերի մտաւորականութեան համար որպէս սրբազան աւանդ և անշեղ նշանաբան, իսկ նոյն իմաստի ոգին ենթարկվելով իր հայրենիքում տարամերժ ձևափոխութեան ու այլակերպման՝ դարձաւ տիրող դասակարգի իշխօղների հաւատոյ հանգանակը, տարածվեց մասսայի լայն խաւերում և յղացրեց Գերմանիային՝ ներկայ համաեւրոպական մեծ ոճիրը։

Միլիտարիստական կործանարար ոգին, «քաղաքակրթութեան ու կուլտուրայի» կեղևի տակ, 40 երկար ու ձիգ տարիներ շարունակ այլասերեց գերման ժողովրդի ստեղծագործող միտքը, թունաւորեց ժողովրդի տրամադրութիւնը, և ներկայումս Շիլլէրի, Գեօթէի, Մարքսի և Բէբէլի պանծալի հայրենիքը փոխվեց տարտարօսի, ուր նիւթվում է մարդկութեան դէմ ուղղված մահաբեր դաւը։

Միայն այժմ հրապարակ է գալիս վերոյիշեալ քաղաքական աֆօրիզմի անմտութիւնն ու մերկութիւնը, իսկ միւս կողմից՝ գերմանական ժամանակակից դպրոցականի մտաւոր սնանկութիւնը։

Որքան էլ պրուսական ուսուցչի ազդեցութիւնն ակնյայտնի կը լինէր ֆրանկօ-պրուսական պատերազմի ժամանակ, բայց և այնպէս նրա յաջորդի կրած խղճալի պարտութիւնն ակնբախ է ամենքիս համար։

Զի որ մի կուլտուրական ժողովրդի քաղաքակրթական հասունութիւնը չէ ստուգվում միայն դպրոցի չորս պատերի արանքներում, չոր ու ցամաք գիտելիքների իւրացման ու մարսման մէջ, այլ նրա հետևողականութեան, խելացի գործելակերպի ու շրջահայեցողութեան մէջ, նամանաւանդ, դէպի քաղաքական խոշոր դէպքերը տածող գիտակցական ու անաչառ վերաբերմունքի ժամանակ։

Գերմանական դպրոցը տասնեակ տարիների ընթացքում, թրծելով անհամար սերունդներ շովինիստների քուրայում, տուեց այսօրվայ «տեւտօնների անխորտակելի բանակ», որի անլուր նախճիրները առաջ նսեմացնում են Ասիայի միջնադարեան հորդաների քամինելի վայրագութիւնները։

Այստեղ արդէն գերմանական դպրոցը ապացուցեց իր «կրթական միսսիայի» ամբողջ սնանկութիւնը։

«Իզուր չէ,—գրում է «Рус. Вѣд.»-ի յօդուածագիրը,—որ գերմանացին իր ուսուցչին միշտ էլ պատկերացրել է որպէս հրամանատար առանց ուսադիրների, զուտ գերմանական միլիտարիստական ոգով. ահա ինչով է թունաւորել ժողովրդական ուսուցիչը, տարիներ շարունակ, իր դաստիարակութեան յանձնված մատաղ սերունդը... Սաների դպրոց յաճախել և սովորելը համարվել է Գերմանիայի զինւորական հզօրութեան ապագայ սպասաւորների ժամանակաւոր դրութիւնը... Դպրոցը գտնվել է զինւորական պատւաւոր ծառայութեան մէջ»։

Մ. Ղազարեան

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԾԱԽՍԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Օսմ. ապիկար կառավարութիւնը գերմանական ուժեղ պրօպագանդայի ազդեցութեան տակ այսօր միլիօնի հասնող մի հսկայական բանակ է դուրս բերել և գերմանացիների թշնամի պետութիւնների սահմանները լցրել։ Այժմս տեսնենք թէ այդ սնանկ կառավարութիւնը ինչ միջոցներով է կառավարում և կերակրում այդ հսկայական բանակը։

Համաեւրոպական պատերազմը հրատարակվելուն պէս, օսմ. կենտր. իշխանութիւնը ամբողջ Թիւրքիան պատերազմական դրութեան մէջ յայտարարելով՝ պաթեստի զօրահաւաք հրատարակեց, իսկ Վանի, Բիթլիսի ու Դիարբեքիրի նահանգներում (չը գիտեմ թէ ինչու միայն այդ 3 նահանգներում), բացի զինւորական դրութիւնից՝ հիմնվեցին և զինւորական դատարաններ։

Այնուհետև եռանդի ու կամքի անօրինակ թափով սկսեց մի այնպիսի հապճեպ զօրահաւաք, որ կարծես թշնամին եկել և իր երկրի սրտում տեղ է կոխել։ Բարձրագոյն հրամանը 20—45 տարեկան թիւրքահպատակ բոլոր արու անդամներին, առանց որևէ բացառութեան (լինեն նրանք թէկուզ բոլորովին զինւորութեան չը ծառայած, միամօր զաւակ, միակտրի, կաղ, հիւանդ կամ ուրիշ ֆիզիքական արատի տէր եայլն) պարտաւորեցնում էր ամենակարճ ժամանակամիջոցում ներկայանալ զինւորական իշխանութեան, ցուցակագրվել և զինւոր դառնալ։ Այսպիսով՝ երկրի համար մի սոսկալի դրութիւն ստեղծվեց։ Դա նշանակում էր ստեղծել առանց այն էլ տնտեսապէս քայքայված մի երկրի առևտուրի, արհեստների, հողագործութեան, վերջապէս տնտեսութեան կատարեալ մահը։ Եւ իրօք՝ մի քանի օրվայ ընթացքում փակվեցին բոլոր խանութները, արհեստանոցները, հողագործական տնտղոտ աշխատանքները, երթևեկութիւնը, եայլն, եայլն։

Այլևս չը մնաց ոչ մի տղամարդ. բոլորն էլ զինւոր դառնալով սահմանները ուղարկվեցին։

Այնուհետև կարծես քիչ համարելով երկրին հասած այս հսկայական հարուածը, սկսեց մի օրիգինալ կողոպուտ։ Մէկը միւսի ետևից բռնի ուժով, առանց մի կոպէկ վարձատրութեան, կառավարութիւնը [illegible] գրաւեց երկրագործ ժողովրդի փոխադրութեան բոլոր միջոցները, ինչպէս օրինակ ձիեր, ջորիներ, եզներ, էշեր, ուղտեր եայլն եայլն։ Այնպէս որ՝ մի քանի օրվայ մէջ կողոպտվեց հաղորդակցութիւնը ոչ միայն քաղաքների, այլև հարևան գիւղերի. ժողովուրդը յանկարծակիի եկաւ և իր անելիքը չը գիտէր։

Ամենակարճ ժամանակամիջոցում սպառվեցին այնպիսի կենսական անհրաժեշտ նիւթեր, ինչպէս օրինակ՝ ալիւր, ցորեն, գարի, նաւթ, սապոն, բրինձ, աղ, թէյ, շաքար և այլն։ Մի կտոր չոր հացի համար ժամերով փուռերի առաջ պէտք էր սպասէին և ձեռք ձգելու համար իրար գլուխ պէտք է ջարդէին։ Այդ էլ կարծէք բաւական չը համարելով՝ կառավարութիւնը բաց արեց կողոպուտների անծայր կծիկը, որդբուկի պէս ծծեց խեղճ ու կրակ ժողովրդի վերջին կաթիլ արիւնը, լրբաբար բոլոր խանութներից բռնութեամբ քաշել տարեց այն՝ ինչ որ իրան պէտք եկաւ։ Դիցուք բազարներից քաշել տարեց բոլոր մահուտեղէնները, սպիտակեղէն, գործեր, կարպետներ, թաղիքներ, պարկեր, բուրդ ու բամբակ և այլն։ Աւելի մեծ վաճառականներից՝ շաքար, թէյ նաւթ, մոմ, կաշեղէն, սապոն, բրինձ, չամիչ և այլն։ Երկաթավաճառներից՝ երկաթեղէններ (զէնքեր պատրաստելու և պատերազմում վիրաւորվածների համար պատգարակներ շինելու)։ Ջամբագներից (հացահատիկի առեւտրով պարապողներ)՝ ցորեն, գարի, բլղուր, գարման և այլն։ Թէջիրներից (ոչխարի մեծ վաճառականներ)՝ խոյ, ոչխար, կով, բուրդ և այլն։ Դրանով էլ չը բաւականանալով սկսեց իւրաքանչիւր արհեստաւորի և խանութպանի վրա մի ուրիշ ձևի տուրք նշանակել։ Դիցուք հացթուխների վրա դրվեց զօրքի համար այսքան օխա թխած հաց պատրաստել։ Բաղաղներից պահանջվեց բանակի տեղափոխութեան համար այսքան պարան (թոկ) տալ, փալանչուղներից՝ այսքան փալան, մանրածախներից՝ ձիաւոր բանակների համար այսքան ձիու կաշաղի, նոյնպէս թել, ասեղ, թուղթ և այլն. արեխ կարողներից՝ այսքան արեխ. զինագործներից՝ այսքան զէնք մաքրել և այլն և այլն։ Նոյն եռանդով ստիպեցին արհեստաւորներին՝ բացառապէս արքունական գործերով զբաղվել օրինակ՝ դերձակը պարտաւորվեց զօրքերի շորերը կարել, որմնադիրը, հիւսնը՝ պետական շէնքերը շինել, սարաջը, դաբաղը՝ ձիերի թամբերը, փամփշտակալները կարել, կաշիներ դաբաղել, ջրաղացպանը, հացթուխը՝ յարքունիս գրաւված ջրաղացների և փռերի վրա բանել, կօշկակարը՝ կօշիկներ կարել, դեղագործները՝ զինուորական հիւանդանոցների համար աշխատել և այլն և այլն։

Այդ էլ կարծէք բաւական չէր, բռնի ոյժով բացվեց մի մեծ հանգանակութիւն։ Իւրաքանչիւր թաղի կամ գիւղի վրա ձգվեց հսկայական մի գումար. իսկ այդ «արդար» բաժանումը յանձնվեց Թիւրքական «կլասիկ» թաղապետներին (մուխթարներին) և թաղի աւագներին։ «Կլասիկ» բառը չակերտների մէջ դնելով՝ կամենում եմ ասել, թէ ինչ անարդար բաժանում կատարվեց և սարիկանութեան ձեռքով խառն հաւաքվեց։ Եւ վերջապէս այս բոլոր քաղաքավարի աւազակութիւնից յետոյ՝ սկսվեց մի ուրիշ տեսակի կողոպուտ։ Կազմվեց հսկայական մի ուրիշ մարմին և ընկնելով թաղից թաղ, գիւղից գիւղ, տնից տուն՝ ինչ որ գտան տանում, գրեթէ բռնի ոյժով քաշեցին ու տարան։ Գրեթէ եմ ասում, որովհետև ինչ որ ուզէին՝ նոյնն էլ խեղճն պէտք է տրվէր, ինչպէս օրինակ՝ սամովար, բաժակ, ամանեղէն, գդալ, գուլպա, փալասներ, սպիտակեղէն, անկողին, թաշկինակ, ծխախոտ և այլն և այլն։

Արդարութեան դէմ չը մեղանչելու համար, այստեղ ընդգծում եմ, որ այս բոլոր կողոպուտներին և հարստահարութիւններին ենթարկվեցին ոչ միայն հայերը, այլ և թիւրքերը և քիւրդերը։

Գրածներս աւելի շատ վերաբերում են քաղաքներին։ Քաղաքներից աւելի վատթար պայմանների մէջ դրին գիւղացիներին։ Զը բաւականանալով բոլոր աշխատող հողագործ ձեռքերին զինուոր տանելով, կառավարութիւնը մէկը միւսի ետևից կնքեց գիւղական հացի հօրերը, յարքունիս գրաւեց բոլոր ջրաղացները և փռները ու սկսեց բանակի համար պաքսիմատ պատրաստել տալ։ Յարքունիս գրաւեց նոյնպէս և բոլոր ջորիները, ձիերը, սայլերը, եզները, ոչխարները, կովերի մի մասը։ Իւրաքանչիւր փոքր ի շատէ կենտրոնական գիւղերում, մանաւանդ ռուսական սահմանակից գիւղաքաղաքներում, պատրաստվեցին ցորենի, ալիւրի պետական հսկայական շտեմարաններ, բնակարաններ, գոմեր. այնպէս որ՝ զօրքը մէկ տեղից միւսը տեղափոխվելիս բաւական էր մի հեռագիր, կամ հեռագիր չեղած դէպքում՝ մի ձիաւորի միջոցով ուղարկված հրամանը, և ահա մի քանի ժամվայ ընթացքում եկող զօրքերի համար հացը, կերակուրը, բնակարանը պատրաստ էր։ Տողերիս գրողը ռուսական սահմանամերձ աւաններից մէկում (Դութաղ) ականատես եղաւ, թէ ինչպէս սեպտ. 14-ին Վանից դէպի Հասան-Կալէ ուղևորվող 15 թաբուր (մի թաբուրը կազմված է 1000—1200 զինուորից) զօրքերը գիշերում Դութաղում իջևանելով՝ ամեն ինչը պատրաստ գտան և նոյն իսկ վճռեցին մօտ 20 օր Դութաղում ապրել։

Թիւրքիայում մի քանի պատերազմներ տեսած ծերունիներ ամենքը իրանց զարմանքն են յայտնում Թիւրքիայի այս անժամվայ արտասովոր զինուորական պատրաստութիւնների համար։

Ժողովրդին կողոպտելու և կեղեքելու համար օսմ. կառավարութիւնը ձեռք է առել և մի ուրիշ միջոց, որը գոնէ մի քանի քիւրդական աշիրէթների մէջ բացարձակ գործ է դրվել։

Զինուորագրութիւնից խուսափելու ժամանակ գործ դրված ամենափոքրիկ դիմադրութիւնը բաւական է եղել, որ կառավարութիւնը ամենախիստ միջոցներ ձեռք առնէ այդպիսի ըմբոստ զինուորացուների դէմ՝ նրանց տները—կամ եթէ այդ դիմադրութիւնը համայնքով է կատարվել, ապա նոյն համայնքի գիւղերը—ունեցած ապրանքը (ձի, ջորի, ոչխար, գոմէշ, ցորեն, գարի և այլն) յարքունիս գրաւելով և բերելով նրանց բազմահազար ոչխարները՝ զօրքին կերակրելու կամ ծախելու։

Այդպիսի դէպքեր շատ եղան Սղերդի շրջանում։

Թէ ինչ չափով բռնի հաւաքումներ և կեղեքումներ են կատարվում այսօր Թիւրքիայի բոլոր գիւղերում, ես կը բերեմ միայն Ալաշկերտի 200 տնից բաղկացած Մոլլա-Սուլէյման հայաբնակ գիւղի ցուցակը։

Երկու ամսվայ ընթացքում ամբողջ գիւղից հաւաքվել է. 24 սայլ՝ իր եզներով, դարձեալ 30 եզ, 24 ձի, 500 սոմար ցորեն (սոմարը մօտ 8 պուդ է), 300 սոմար գարի, 40 քէչա, 50 թեռ (խուրջինի մեծ տեսակը), 875,000 օխա ցախ, 235,000 օխա խոտ, 110 զոյգ գուլպա, 100 սոմար բլղուր, 300 օխա իւղ, մօտ 200 ոչխար (մօտ եմ ասում, որովհետև ոչխար տանելը սովորական երևոյթներից մէկն է), 20 կով։

Այս նոյն գիւղը մօտ 250 տղամարդ էլ զինուորացու է տուել։

Երբ այս բոլոր կործանիչ երևոյթների դէմ բողոքում է Բիթլիսի հայոց առաջնորդը վալիին (որ Թալէաթ բէյի ազգականն է և երդուեալ երիտասարդ Թիւրքերից) և նրա ուշադրութիւնն է հրաւիրում, վալին ցինիկաբար պատասխանում է. «Ոչինչ, եթէ այս երկիրը մեզ մնայ, հօ մի քանի տարուց յետոյ ժողովուրդը էլի նոյն բարեկեցութեանը կը հասնի, իսկ եթէ մեր ձեռքից դուրս եկաւ, ապա թող գան մեր թշնամիները անապատների վրա թագաւորեն»։

Այս բոլոր ապօրինի կողոպուտները թողնելուց յետոյ, արժէ՛ր շօշափել և զինուորութեան փոխարէն վճարելիք տուրքի մասին։ Ինչպէս յայտնի է, Թիւրքիայում կարելի է զինուոր չը գնալ և դրա փոխարէն դրամ վճարել, որ ի հարկէ մի շատ անարդար օրէնք է հարուստի և աղքատի վերաբերմամբ։ Զինուորութեան փոխարէն վճարելիք տուրքը հասնում է 43—60 օսմանեան լիրայի, նայելով թէ ինչքա՞ն զինուոր է վճարողը թէ պահեստի։ Շատերը կարծում էին որ զինուորութեան փոխարէն վճարելիք դրամը տասնեակ միլիոնների կը հասնի։ Հէնց այդ նպատակով էլ թիւրք խորամանկ կառավարութիւնը վճռեց քրիստոնեաներից էլ մինչև 45 տարեկան զինուոր հաւաքել։ Բայց ի՞նչ զարմանք, որ զինուորութեան փոխարէն վճարելիք տուրքը հազիւ կէս միլիօն օսմանեան լիրայի հասաւ։ Նշանակում է՝ Թիւրքիայում զինուորութեան փոխարէն հազիւ թէ 1% վճարողներ եղան, այն էլ մեծ մասամբ քրիստոնեաները։

Բացի այդ բոլորը, Թիւրքիայում այսօր կիսապաշտօնապէս գրեթէ հաստատվում է, որ Թիւրքաց զօրանաւաքի ծախսերի համար Գերմանիան խոստացել է 3 ամիս ժամանակ օրական 180,000 օսմ. ոսկի վճարել, որ մօտ 16.200,000 օսմ. ոսկի կանէ։

Ահա թէ որտեղից է ծածկում Թիւրքական կառավարութիւնը իր խղճուկ զինուորական ծախսերը... Ար. Գիւրջեան

Բիթլիս

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՕԳՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ

Ստացանք Քրիստափոր Մելիք-Մարութեանից 15 ռ. իր այսօրվայ տօնախմբութիւնը կատարելու փոխարէն։ Մինչև այժմ ստացվածների հետ միասին (տես «Մշակ» № 204) ունենք ստացած ընդամէնը 43 ռուբ.։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Երբ շաբաթ երեկոյեան հաստատվեց այն լուրը, որ պատերազմը Թիւրքիայի դէմ անխուսափելի է դարձել, կիրակի օր, հոկտեմբերի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին Թիֆլիսի հայոց առաջնորդարանում կայացաւ մի խորհրդակցական ժողով, որին շտապով հրաւիրված էին մօտ 30 անձինք։ Րոպէն պատմական էր և ծանր պարտականութիւններ էր դնում ամենից առաջ Թիֆլիսի հայ մտաւորականութեան և հասարակութեան վրա։ Այդ խորհրդակցական ժողովում, ամենքը ոգևորված, համակված միևնոյն վեհ զգացումներով, որոշվեց իբրև արտայայտութիւն այդ զգացումների ամենից առաջ կատարել հանդիսաւոր մաղթանք և հնարաւորութիւն տալ ամբողջ ժողովրդին՝ աղօթել ռուսական զէնքի յաղթանակի համար, ապա արտայայտել հայ ժողովրդի երախտագիտական և հաւատարիմ հպատակութեան զգացումները Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի միջոցով։ Որոշվեց նաև կազմել պատգամաւորութիւն, որի մէջ մտնէին հայ հասարակութեան բոլոր խաւերի, դասակարգերի և հայկական հաստատութիւնների ներկայացուցիչները, ինչպէս և հայ մամուլի ներկայացուցիչները, ներկայանալու Փոխարքային առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի գլխաւորութեամբ։ Խորհրդակցական ժողովն ընտրեց իր միջից 10 հոգուց բաղկացած մի մասնաժողով (Գ. Տուրինեան, Հ. Առաքելեան, իշխ. Մ. Թումանեան, Մ. Բերբերեան, Ս. Յարութիւնեան, Ն. Աբէլեան, Խ. Աֆրիկեան, Շիրվանզադէ, Դոլուխանեան, Ալ. Պապովեան) կատարելու նախապատրաստական գործողութիւնները, կազմակերպելու պատգամաւորութիւնը, բաղկացած 100 հոգուց, և հրաւիրելու այդ պատգամաւորներին ընդհանուր ժողովի երկուշաբթի, հոկտ. 20-ին, երեկոյեան ժամը 7-ին։

Որոշեալ ժամին առաջնորդարանում հաւաքվել էին բոլոր հրաւիրեալները, այն է պատգամաւորութեան բոլոր անդամները, թւով 100 հոգի։ Ժողովը բացեց Մեսրոպ եպիսկոպոսը, արտասանելով մի յուզված ճառ պատմական րոպէի կարևորութեան և հայ ազգին բաժին ընկած պարտականութեան անթերի կատարման մասին։ Ապա խօսեցին Ս. Յարութիւնեան, Ալ. Խատիսեան, Շիրվանզադէ և Հ. Առաքելեան։

Ս. Յարութիւնեան ծանրանալով նոյնպէս այն նոր էջի վրա, որ ներկայ ռուս-թիւրքական պատերազմով բացվում է Կովկասի և մանաւորապէս հայոց պատմութեան մէջ, տեղեկութիւններ հաղորդելով հայ կամաւորներից կազմված զինուորական խմբի կամ դրուժինայի մասին, թւով 2400, որոնք ոգևորված հայրենիքին ծառայելու գաղափարով, դիմել են պատերազմի դաշտը՝ օգնելու ռուսական զօրքին և զէնքին, և որոնց թիւը կարող է կրկնապատկվել, եռապատկվել, ի նկատի ունենալով ցանկացողների մեծ թիւը, ցոյց տուեց և անհրաժեշտութիւնը զոհաբերութիւններ անելու, թէ ֆիզիկական, թէ մտաւոր և թէ նիւթական միջոցներով։ Հայ կամաւորների պահպանութեան և օժանդակութեան լրացուցիչ միջոցները հայթայթելու համար, ներկայումս առնուազն հարկաւոր է մէկ միլիոն ռուբլի, որ, անշուշտ, հայ հասարակութիւնը, մանաւանդ նրա ունևոր մասը չեն զլանայ հայթայթել։

Ալ. Խատիսեան հաղորդեց կարևոր տեղեկութիւններ և շեշտեց այն հանգամանքը, որ այժմ նիւթական օգնութիւնը հայ ունևորների կողմից կարող է անարգելք և անվտանգ կատարվել։

Շիրվանզադէ առաջ բերեց բէլգիացիների օրինակը, որոնք եթէ միայն կամենային կատարել Գերմանիայի պահանջը՝ թոյլ տալ անցնել իրանց երկրով, չէին ենթարկվի այնքան մեծ աղէտների, բայց որովհետև նրանք չը կամեցան հպատակվել մի անարդար և անպատիւ պահանջի, ուստի հերոսաբար և ազնուաբար կրեցին այդ աղէտները։ Հայերն էլ այժմ պէտք է պատրաստ լինեն ամեն տեսակ զոհաբերութեան։

Հ. Առաքելեան խօսելով, որ այս րոպէին ամբողջ հայ ժողովուրդը համակված և տոգորված է միևնոյն զգացումներով, որով տոգորված է այժմ և ժողովը, և ցոյց տալով, որ ներկայումս հայութեան առջև մեծ վտանգ կայ, որ Թիւրքիայում կարող է հայերի կոտորած առաջանալ և մեր եղբայրակիցները ստիպված կը լինեն ապաստանել մեր երկիրը թիւրքական հալածանքից, առաջարկեց ի նկատի ունենալ և նրանց պահպանութեան և խնամատարութեան հարցը։

Ս. Յարութիւնեան յայտնեց, որ առաջնորդարանին կից կազմված բիւրօն զբաղվում է այդ հարցերով։

Մեսրոպ եպիսկոպոսը յայտնելով, որ երկրորդ օրը, հոկտեմբ. 21-ին, Վանքում հանդիսաւոր մաղթանք է կատարվելու, որից յետոյ պատգամաւորութիւնը պէտք է դիմի պալատը և ներկայանայ Փոխարքային, փակեց ժողովը։

ՀՍԿԱՅԱԿԱՆ ՑՈՅՑ

Երէկ Երևանեան հրապարակում ռուս հոգևորականութիւնը հանդիսաւոր մաղթանք կատարեց ռուսաց զօրքի ու զէնքի յաղթութեան համար։ Մաղթանքից յետոյ քաղաքագլուխ Ալ. Խատիսեան մի զգացված ճառ խօսեց ներկայ ռուս-թիւրքական պատերազմի էութեան և նշանակութեան մասին։ Քաղաքագլուխը իր ճառը վերջացրեց գոչելով. «Կեցցէ Մեծ Ռուսաստանը, կեցցէ ռուսաց քաջարի զօրքը, կեցցէ Կովկասի Փոխարքան՝ կովկասեան զօրքերի հրամանատարը»։

Քաղաքագլխի խօսքերը ծածկվեցին որոտընդոստ «ուռա»-ներով և երկարատև բացագանչութիւններով։ Տեղական կրթական շատ հաստատութիւնների, գլխաւորապէս գիմնազիաների աշակերտական երաժշտախմբերը նուագեցին ռուսական ազգային հիմնը։ Մաղթանքին ներկայ էին բազմաթիւ պաշտօնական անձինք։ Երևանեան հրապարակը լի էր ծովածաւալ բազմութեամբ։ Հրապարակի վրա եղած շէնքերի պատշգամբները, լուսամուտները և նոյն իսկ տանիքները լցված էին մարդկանցով։ Էլեկտրաքարշի վագոնների, աւտոմոբիլների և կառքերի երթևեկութիւնը շատ տեղերում կանգ էր առել։

Մաղթանքից յետոյ հանդիսականները եկեղեցական թափօրով դիմեցին դէպի Փոխարքայի պալատ։ Այնտեղ դիմեցին և աշակերտական երաժշտախմբերը, ռուս ազգային հիմնը նուագելով. դրանց հետևեցին համքարները իրանց դրօշակներով։ Աշակերտական խմբերը տանում էին Թագաւոր Կայսրի պատկերը և մի քանի դրօշակներ։

Անթիւ-անհամար ժողովուրդը հաւաքվելով Փոխարքայի պալատի առաջ սկսեց «ուռա»-ներ գոչել և բացագանչել «Կեցցէ՛ Ռուսաստանը, ռուսական մեծ զօրքը և Կովկասեան Փոխարքան», «Կեցցէ Ֆրանսիան, Անգլիան», «Կեցցէ եռրեակ համաձայնութիւնը»։

—

Ինչպէս որոշված էր, երէկ Վանքի եկեղեցում խուռն բազմութեան ներկայութեամբ մատուցվեց պատարագ, որից յետոյ Վանքի բակում կատարվեց հանդիսաւոր մաղթանք, Մեսրոպ եպիսկոպոսի և էջմիածնից նոր եկած Բագրատ եպիսկոպոսի և ամբողջ քահանայական դասի մասնակցութեամբ։ Ներկայ էին և հայ համքարները իրանց դրօշակներով և հայոց դպրոցների աշակերտ-աշակերտուհիները և ժողովրդի ահագին բազմութիւն։ Մաղթանքից յետոյ Մեսրոպ եպիսկոպոսը մի քարոզ խօսեց։ Նա այն միտքն արտայայտեց, որ մենք, իբրև հպատակներ և քաղաքացիներ ռուսական պետութեան, ունենք որոշ պարտականութիւններ, բայց իբրև հայեր ունենք և առանձին պարտականութիւններ, որովհետև ներկայ պատերազմը Թիւրքիայի դէմ սահմանված է և բերելու է մեր թիւրքահայ եղբայրների ազատութիւնը օսմանեան լծից։

Ապա Մեսրոպ և Բագրատ եպիսկոպոսները պատգամաւորների և խուռն բազմութեան ուղեկցութեամբ գնացին Փոխարքայի պալատը։

Ուղիղ ժամը 2-ին Փոխարքայի պալատում, սպիտակ ընդարձակ դահլիճում տեղը գրաւեցին կովկասահայութեան պատգամաւորութիւնը, թւով մօտ 70 հոգի, գլուխ ունենալով առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին և էջմիածնից այս օրերս եկած Հայրապետական դիւանապետ Բագրատ եպիսկոպոսին, Թիֆլիսի քաղ. դումայի պատգամաւորութիւնը, գլուխ ունենալով քաղաքագլուխ Ալ. Իվ. Խատիսեանին, և Թիֆլիսի շիա և սիւննի մահմեդական ազգաբնակութեան պատգամաւորութիւնը, գլուխ ունենալով կովկասեան մուֆթիին և շէյխ-ուլ-իսլամին։

Կողքի սենեակից մտաւ Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվ իր օգնական հօֆմէյստէր Պետերսոնի և շքախմբի հետ։ Մեսրոպ սրբազան մօտեցաւ կոմսին և արտասանեց հետևեալ ճառը ռուսերէն.

«Ձերդ պայծառափայլութիւն
«Կոմս Իլլարիոն Իվանովիչ.

«Այս հանդիսաւոր պատմական ժամին, երբ Ռուսաստանը, ենթարկվելով դաւադրական յարձակման Թիւրքիայի կողմից, չը նայելով իր խաղաղասիրութեան, գրաւվում է մի նոր պատերազմի մէջ, մենք եկել ենք այստեղ, արտայայտելու մեր և մեր ներկայացուցիչ հայ ժողովրդին ոգևորող զգացումները։

«Հայաստանը նորից դարձաւ ասպարէզ ժողովուրդների արիւնահեղ ընդհարման։ Խոնարհվելով Ամենաբարձրեալի կամքի առաջ և երջանիկ գիտակցութեամբ, թէ ռուսական պետութեան բաժին ընկած փորձանքների այս տարին՝ մենք կարող ենք, մեր պապերի օրինակով, որոնք հիւսեցին իրանց համար փառք պատերազմի դաշտում, զոհել մեր կեանքը և մեր գոյքը Մեծն Ռուսիոյ բարօրութեան համար, մենք աղօթելով Աստուծուն շնորհելու յաղթութիւն ռուսական քրիստոսասէր զինուորութեան՝ եկել ենք խնդրելու ձերդ պայծառափայլութեանը արկանել յոտս Մեր Թագակիր Վեհապետի՝ հաւատարիմ հպատակ հայ ժողովրդի անսահման անձնուիրութեան և ջերմ սիրոյ զգացումները։

«Եւ երբ ռուս քաջարի զօրագնդերը, շարժվելով թշնամու վրա, տանում են իրանց հետ ազատութիւն մեր եղբարց, որոնք հեծծում են թիւրքական դարաւոր լծի ներքոյ, միմիայն մի մտածմունքով, մի ցանկութեամբ է տոգորված հայերի սիրտը—թող Տէր Աստուածը յաղթութիւն ուղարկէ ռուսական զէնքին։

«Կեցցէ՛ մեր սիրեցեալ Վեհապետը, կեցցէ Նրա փոխարքան, կեցցէ ռուսական փառապանծ զօրքը»։

Փոխարքան պատասխանեց. «Ուրիշ զգացմունքներ սպասել հայ ժողովրդից ես չէի կարող։ Թէև այդ զգացմունքները քաջ յայտնի են Թագաւոր Կայսրին, բայց ես կը հեռագրեմ իսկոյն ձեր հաւատարիմ հպատակութեան զգացմունքները և Նորին Մեծութեանը հաճելի կը լինի նորից հաւատախանալ այդ զգացմունքների մէջ»։

Դրանից յետոյ Խատիսեան կոմսին արտայայտեց Կովկասի ամբողջ ազգաբնակութեան հաւատարիմ զգացմունքները։ Պատմական այս նշանաւոր րոպէին բոլոր ազգութիւնները անխտիր պատրաստ են զոհաբերելու իրանց կեանքը և գոյքը հայրենիքի համար։

Մահմէդականների կողմից խօսեցին մուֆթին և շէյխ-ուլ-իսլամը, որոնք մասնաւորապէս յայտնեցին թէ՝ իսլամի կրօնը պարտաւորեցնում է մահմեդականներին հաւատարիմ մնալ հայրենիքին և հանդէս գալ նրա պաշտպանութեան համար թշնամու դէմ, ով որ էլ այդ լինի։ Կովկասաբնակ մահմէդական տարրը համակված է այդ զգացմունքով ներկայ րոպէին։

Կոմսը ուրախութիւն յայտնեց այդ խօսքերի առթիւ։

Վերջը մօտեցաւ կոմսին և հրէաների կողմից հաւատարիմ զգացմունքներ արտայայտեց հրէաների ռաբբին։

Դրանից յետոյ կոմսը հրաժեշտ տուեց բոլոր ներկայացածներին։

Ժողովրդական անհամար ամբոխները ժամը 3-ից սկսեց ցրվել պալատի մօտից։

Նման համաժողովրդական հսկայական ցոյց Թիֆլիսը տեսած չէր։

ԴՈՒՄԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ

(հոկտեմբերի 19-ին)

Քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեանի ճառը

Պարոնայք խորհրդականներ։ Այսօր ես հրաւիրել եմ դումայի արտակարգ նիստը՝ աչքի առաջ ունենալով ահագին կարևորութիւն ունեցող դէպքեր սկսվելու հաւանականութիւնը։ Երէկ, երեկոյեան ժամը 11-ին, երկրիս բարձր իշխանաւորները յայտնեցին ինձ, որ մեր զօրքին հրաման է տրված Կովկասում պատերազմական գործողութիւնների ձեռնարկել ընդդէմ Թիւրքիայի։ Մեր որոշումը պատասխան է Թիւրքական նաւատորմի կողմից մեր ծովափերին արած յարձակումներին։ Մեզ վրա յարձակում գործեցին, մենք էլ պատասխանեցինք։ Սկսվեց կռիւը մեր սահմանի վրա։ Նա հանդիսանում է մասնիկը այն մեծ կռւի, որը երեք ամիս է արդէն մղւում է մեր հայրենիքը յանուն երկու մեծ գաղափարների—ինքնորոշման և մանր պետութիւնների ու ազգութիւնների համար, արդարութեան և իրաւունքի սկզբունքների յաղթանակի համար։ Թիւրքիայի դէմ մղվող կռիւը երկու ցեղերի կամ երկու կրօնների կռիւ չէ, այլ իրաւունքի և արդարութեան կռիւ ընդդէմ կամայականութեան և անիրաւութեան ռէժիմի։ Այդ կռւի մէջ Կովկասի բոլոր ազգութիւնները, առանց դաւանութիւնների, դասակարգերի ու ազգութիւնների տարբերութեան, պէտք է համախմբվեն մեր քաջարի զօրքի շուրջը և բոլոր մեզ մատչելի միջոցներով դիւրացնեն նրա վսեմ նպատակը՝ յաղթութիւն տալու մեր փառաւոր զէնքին և մեր մեծ հայրենիքին։ Ուղի՞ղ է դա արդեօք։ (Ձայներ՝ «Ուղիղ է, ուղիղ է...»։ Լսվում են երկարատև ծափահարութիւններ)։

Յաղթութեան մէջն է,—շարունակում է իր ճառը Ա. Ի. Խատիսեանը,—գրաւականը մեր երջանիկ քաղաքացիական ապագայի, իրագործումը ոսկէ երազների՝ մեր թանգագին Կովկասում բնակվող ազգութիւնների ընտանիքի բոլոր ստեղծագործական ույժերի ազատ զարգացման մասին։ Օգնութիւն վիրաւորեալներին, ազգաբնակութեանը անհոգ ապաշարով ապահովելը, զօրականների ընտանիքներին օգնելը—ահա թէ որոնք են մեր առաջին հոգսերը։ Կովկասին առաջին անգամը չէ վիճակվում իրան պաշտպանել. նրա պատմութիւնը հերոսական կռիւների պատմութիւն է։ Ես հաւատում եմ, որ մենք կը յաղթենք, և որ յաղթութիւնից յետոյ հաստատուն կերպով կը թագաւորեն քաղաքացիական ազատութիւնները Ռուսաստանում և ազգերի ազատ զարգացումը Կովկասում, որին չեն կարող դիպչել ոչ գրպարտութիւնը և ոչ չարախօսութիւնը։ Թող ի մի համախմբվեն Կովկասի բոլոր ազգութիւններն ու Թիֆլիսի ազգաբնակութիւնը խիտ շարքերով. Թող անքակտելի կերպով ամրապնդվի նրանց մտերմութիւնը մշտնջենաբար ու թող չանյուշանայ մեր յիշողութիւնը պատերազմի բոլոր զոհերի ու հերոսների նկատմամբ։ Ես առաջարկում եմ բարձրաձայն գոչել «ուռա» մեր սիրեցեալ Թագաւորին, մեր մեծ հայրենիքին ու թանգագին Կովկասին։ (Երկարատև «ուռան» թնդացնում է դահլիճը)։

Շ. Վ. Ալէքսէև-Մեսխիէվի ճառը

Պարոնայք խորհրդականներ. պատմական մեծ անցքերի ընդհանուր շարժման մէջ ներկայացաւ մի նոր մոմենտ։ Սկսվեցին պատերազմական գործողութիւններ Թիւրքիայի հետ։ Մի թշնամի ևս ուզում է թուլացնել Ռուսաստանի ույժը և հարուած տալ նրան։ Հասաւ րոպէն, երբ մենք, Կովկասում բնակվող ազգութիւններս, մեր երկրի աշխարհագրական դիրքի ու պատերազմական գործողութիւնների բեմին մօտիկ լինելու շնորհիւ, պէտք է համաժողովրդականօրէն, ի լուր ամենքի արտայայտենք այն զգացմունքները, որոնք յուզում են մեզ։ Ես, Թիֆլիս քաղաքի ազգաբնակութեան ներկայացուցիչս, պատիւ ունեմ պատկանելու վրաց ազգութեանը և քաղաքացի եմ Մեծն Ռուսաստանի։ Ես խօսելու եմ իբրև իրաւասու, բայց չեմ կասկածում, որ այն զգացմունքները, որը ես կարտայայտեմ այսօր, բաժանում է ինձ հետ նաև ամբողջ վրաց ժողովուրդը։ Եթէ մի հայեացք ձգենք Վրաստանի կողմից դէպի Ռուսաստանն ունեցած փոխ-յարաբերութիւնների ամբողջ պատմութեան վրա, սկսած իր յօժար կամքով միանալու րոպէից, դուք կը տեսնէք մի չափազանց կարևոր հանգամանք։ Պատմական կեանքի բոլոր մոմենտներին, երբ պահանջվում էր ամբողջ պետական օրգանիզմի լարումը, վրաց ժողովուրդը միշտ էլ կռիւ էր մղում ռուսական զօրքի առաջին շարքերում և դրանով կատարում իր պարտքը։ 19-րդ դարի ու մեր օրերի բոլոր պատերազմները վկայում են այդ մասին։ Ցեչեցէք Ղրիմի ու Թիւրքական պատերազմները, և այլ պատմական թւականները։ Միշտ վրաց ժողովուրդը ամենաջերմ մասնակցութիւն էր ցոյց տալիս պետութեան թշնամիների դէմ մղած անհաւասար պատերազմներում։ Եւ լոյալութեան այդ իդէան բղխում էր ոչ թէ մոմենտի պատահականութիւններից, այլ օրգանապէս կապ էր ունենում ամբողջ վրաց ազգի տրամադրութեան հետ, բղխում էր ու միանում այն մտքի հետ, որը Վրաստանը Ռուսաստանի հետ միացնելու հիմքն էր կազմում։ Վրաստանի վաղեմի հակումը դէպի ռուսական պետութիւնը բացատրվում է վրաց ժողովրդի խորը ձգտումով պահպանելու իր «եսը», իր երկիրը (տերրիտօրիան), իր լեզուն ու կուլտուրան թշնամիների արշաւանքներից։ Համաձայն այդ պատմական մտքի ու տրադիցիաների, երբ ծագեց մեծ համաեւրոպական պատերազմը, վրաց ժողովուրդը ուղարկեց պետական շահերը պաշտպանելու համար իր լաւագոյն որդիներին, որոնք երգելով գնացին առաջապահ դիրքերը։ Այն արիւնը, որ թափւում են նրանք կողք-կողքի ռուս հերոսների հետ միասին, մի անգամ ևս ընդգծում է վրաց ժողովրդի համերաշխութիւնը Ռուսաստանի հետ։ Եւս առաւել ներկայ պատմական մոմենտին, երբ թշնամին սպառնում է համապետական նպատակներին և դրա հետ միաժամանակ անմիջական կերպով շօշափում է վրացիների շահերը, վրաց ժողովրդի բոլոր տարրերը կը միանան, որպէսզի դիմադրութիւն ցոյց տան ընդհանուր թշնամուն, և ես հաստատ հաւատում եմ, որ մեծ ռուսական պետութիւնը բաւականաչափ անհաւասար ոյժեր կունենայ երկիրը պաշտպանելու համար։ (Բուռն և երկարատև ծափահարութիւններ իրաւասուների և հանդիսականների միջից)։ Պարոնայք իրաւասուներ, ես խորը համոզված եմ, որ ներկայ պատմական մոմենտի վեհութեան առաջ մոռացութեան կը տրվեն այն բոլոր տարաձայնութիւնները, որ կարող էին լինել խաղաղ ժամանակը Կովկասի առանձին-առանձին ազգութիւնների միջև, և մենք կը միանանք ռուս մեծ ժողովրդի հետ մի հզօր ձգտումով մեր պարտքը կատարելու հանդէպ պետութեան։ Մեր կրծքերով կը պաշտպանենք հայրենիքը և ձեռք կը բերենք իրաւունքի ու արդարութեան յաղթանակը։ (Կրկին երկարատև ու բուռն ծափահարութիւններ)։

Ի. Մ. Դօլուխանեանի ճառը

Պարոնայք իրաւասուներ. մենք ապրում ենք պատմական մոմենտում, լուրջ անցքեր են կատարվում և մեր թշնամին չէ քնած։ Արդ՝ դիմաւորենք գալիք անցքերը կատարեալ հանգստութեամբ ու մեր արժանապատուութեան գիտակցութեամբ։ Եւ թող չը լինի մեր մէջ ոչ վրացի, ոչ հայ, ոչ ռուս, ոչ միւսիւլման, այլ լինենք մենք կովկասցիներ։ Եւ պատերազմի նշանաբանը թող դառնայ Կովկասի բոլոր ազգութիւնների միաբանութիւնը յանուն հանուր բարօրութեան։ Թող ուրեմն պայծառանայ մեր գիտակցութիւնը և գիտենանք մենք բոլորս, որ մեր՝ Կովկասում բնակվող ազգութիւններիս մէջ չի կարող և չը պէտք է լինի ոչ միայն պառակտում, այլ և թիւրիմացութիւններ։ (Ծափահարութիւններ)։

Իսկ թշնամուն պատասխանենք՝ ոչ մի թիզ Կովկասի հողից. և թող յիշեն մեր թշնամիները, որ քաջագործութիւնն է ծնել Կովկասը և քաջագործութիւնն էլ նրան չի լքի։ (Կրկին բուռն ծափահարութիւններ)։

Մենք ընդունակ չենք յարձակվելու թագստից, մենք չենք ռմբակոծում անպաշտպան քաղաքները, չենք մօտենում թշնամու նաւերին թշնամու ազգային գոյներով ներկված. մենք ասում ենք բացարձակ՝ «ռազմի դաշտ դուրս եկէք դուք, մեզ վրա յարձակվողներ»։ Եւ թող չը մոռանան մեր ծովափնեայ քաղաքների վրա դաւաճանօրէն թնդանօթային գնդակներ նետողները, որ Կովկասում դեռ ևս կենդանի են ոգին ու փառքը մօտիկ անցեալի հերոսների՝ իշխան Մելիքովի ու կոմս Լօրիս-Մելիքովի, իշխ. Ամիլախվարիի ու Տէր-Ղուկասովի, իշխ. Ճավճավաձէի ու Լազրեւի, իշխ. Ամիրաջիբիի ու Ալխազովի և հազարաւոր ուրիշների (ձայներ՝ «Ուղիղ է». երկարատև ծափահարութիւններ)։

Ուրեմն լինենք եղբայրներ մենք, Կովկասում բնակվող ռուսները, վրացիները, հայերն ու միւսիւլմանները և հաւատարիմ փառաւոր տրադիցիաների, հոգով հզօր ընտանիք Նախախնամութիւնից մեզ ուղարկված փորձութիւնը անխախտ հաւատով դէպի մեր արդար գործի յաղթանակը։

Խօսում եմ իբրև իրաւասու, իսկ իբրև հայ յայտարարում եմ, որ հայ ժողովրդի զգացմունքների մէջ, նրա անձնուիրութեան ու պատրաստակամութեան մէջ՝ իր կեանքը զոհաբերելու հայրենիքի համար չը կայ ու չի էլ կարող տարակուսանքներ լինել. անթիւ են դրա ապացոյցները թէ անցեալում և թէ ներկայիս մէջ։

Եւ հաւատում եմ ես, որ անսահման սէրը դէպի մայրենի հողը և մեր ընդհանուր հայրենիք Ռուսաստանը, և փոխադարձ եղբայրական աջակցութիւնը մեր բոլորի՝ Կովկասում բնակվող ազգութիւնների՝ անդառնալիօրէն կառաջնորդեն մեզ դէպի յաղթանակ։

Արդ՝ գոչենք մենք յանդուգն թշնամուն կարելոյն չափ բարձրաձայն և ի բոլոր սրտէ. հեռու ճանապարհէցդ։ (Բուռն, երկարատև ծափահարութիւններ դումայի ամբողջ դահլիճում)։

Այնուհետև քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեանը բացատրում է ժողովին, որ իրաւասու Վէքիլովի մահից յետոյ դումայում չը կայ Թիֆլիս քաղաքի թուրք ազգաբնակութեան ներկայացուցիչ, բայց որովհետև այստեղ կան նրանց հասարակութեան ներկայացուցիչներից, ուստի նա քաղաքային կանոնադրութեան հիման վրա խօսք է տալիս միւսիւլման գաղութի անդամներից մէկին՝ ընտրող պ. Հասան-զադէին։

Հասան-զադէի ճառը

Մենք, միւսիւլմաններս, բնաւորութեամբ շատ հաւատարիմ ժողովուրդ ենք մեր կառավարութիւններին։ Մենք նուիրված ենք Ռուսաստանին ամբողջ հոգով։ Թիւրքիայի հետ ունեցած անցեալ պատերազմներին միւսիւլմանները ամեն կողմից գալիս խմբվում էին ռուսական դրօշակների ներքոյ և անյաղթելիների համբաւ էին վաստակում։ Մի խօսքով՝ մենք, միւսիւլմաններս, վերաբերվում ենք դէպի Ռուսաստանը՝ ինչպէս հարազատ մօրը և պատրաստ ենք մինչև արեան վերջին կաթիլը պաշտպանել նրան ում յարձակումներից կուզէ լինի։ (Ծափահարութիւններ)։

Մ. Ն. Վէսէլօվզօրովի ճառը

Իմ ասելիքը կարճ կը լինի։ Այն ամենը, ինչ որ ասվեց այստեղ, ինձ համար նորութիւն չէ։ Մանկութեան օրերից ես ապրում եմ կովկասեան այլացեղ ազգութիւնների ներկայացուցիչների շրջանում և վաղուց է արդէն՝ ես եկել եմ այն համոզման, որ կովկասցիների մէջ չը կան ձգտումներ զատվելու, դուրս գալու մեր ընդհանուր հայրենիքից։ Այն ամենը, ինչ որ ասվում էր Կովկասի այս կամ այն ազգութեան կենտրօնախոյս ձգտումների մասին, ես միշտ էլ համարել եմ չարամտօրէն հնարված կամ թէ, լաւագոյն դէպքում, ցաւալի մոլորութիւն։ Եւ ահա այժմ, փորձութեան ահաւոր ժամին, ես տեսնում եմ, որ ես ուղիղ էի։ Մենք բոլորս միաբան ենք, բոլորս էլ ոգևորված ենք մի ձգտումով՝ դիմադրել թշնամուն, թոյլ չը տալ նրան տիրանալու մեր դաշտերին, անտառներին, սարերին, մեր աքանչելի Կովկասին։ Թշնամին նենգ կերպով յարձակվեց մեր անպաշտպան խաղաղ քաղաքների վրա և այդպիսով պատերազմական գործողութիւններն սկսելու պատասխանատուութիւնը իր վրա առաւ։ Իր յարձակմամբ նա յոյս էր դրել մեր պառակտման վրա. նա գիտէր, որ երբ մենք միաբանվել ենք, անյաղթելի ենք. բայց նա կարծում էր, թէ Կովկասի առանձին-առանձին ազգութիւնների միջև եղած մանր-մունր տարաձայնութիւններն ու թիւրիմացութիւնները, որոնք խաղաղ ժամանակները թւում էին շատ խոշոր ու լուրջ, պատերազմի ժամանակ կը փոխվեն ներքին հրդեհի, և այդ բոցերի մէջ մենք կայրվենք։ Թշնամին սխալվեց. և մենք կը յաղթենք։ Հաւատացած դրանում, ես մի յոյս էլ եմ յայտնում, աւելի քան յոյս, հաւատ այն բանին, որ պատերազմը վերջանալուց յետոյ՝ Կովկասի բոլոր ազգութիւնների ազգային արդարացի ձգտումները բաւարարութիւն կը ստանան։ (Ծափահարութիւններ)։

Երաշխաւորութիւն դրան ծառայում են այն վեհ դէմքերը, որոնց դրօշակի տակ մղվում է ներկայ ազատագրական պատերազմը։ Միաբան ռազմի դաշտում, մենք կը մնանք համերաշխ նաև պատերազմից յետոյ մեր հայրենի Կովկասի կուլտուրական վերածնութեան անդաստանի վրա։ Այդ յուսով, այդ անդրդուելի հաւատով դէպի վերջնական յաղթանակ, մենք արիաբար ու անդրդուելիօրէն կը տանենք պատերազմական ժամանակի բոլոր արհաւիրքները, որովհետև մենք գիտենք, որ երբ միաբան ենք, մենք անյաղթելի ենք։ (Երկարատև և բուռն ծափահարութիւններ իրաւասուների նստարանների վրա ու հանդիսականների մէջ)։

Ա. Ի. Միտկէվիչի ճառը

Երբ սրանից երեք ամիս առաջ այս միևնոյն դահլիճի մէջ մեզ հաղորդեցին Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ յայտարարելու մասին, այն ժամանակ արդէն մեզանից շատերի մէջ ծագեց այն միտքը, թէ պատերազմական գործողութիւնները անխուսափելի են և մեր երկրի համար, որը սահմանակից է Ռուսաստանի վաղեմի թշնամի երկրին։

Սկսած յուլիսի 17-ից մինչև այժմ ամենայն օր լուրեր էին ծագում այդ մասին ու հերքվում, և վերջապէս ահա այն, ինչ որ տեղի էր ունենալու, տեղի ունեցաւ. պատերազմական գործողութիւնները Թիւրքիայի դէմ սկսվեցին. արիւնահեղ ալիքը սկսեց զարնվել Կովկասի ափերին։ Թշնամին պատերազմը սկսեց անկուլտուրականօրէն, ինչպէս որ յատուկ է անկուլտուրական թշնամուն. բայց այդ մեզ չի կարող զարմացնել, քանի որ կուլտուրական ազգի անկուլտուրական եղանակի օրինակն ունենք մենք արդէն։ Պատերազմը մօտենալու վտանգը պէտք է սաստկացնէ մեր ցանկութիւնը՝ յաղթելու թշնամուն։ Մենք յիշում ենք այն միաբանութիւնը, որով թէ մեր և թէ Մեծ Ռուսաստանի ամբողջ ազգաբնակութիւնը դիմաւորեց թշնամու կոչին։ Իբրև Կովկասում ծնված ռուս մարդ՝ ես խորապէս հաւատացած եմ, որ սրբազան Ռուսաստանի կողմից իր հիմնարկութեան օրից ի վեր վաղեմի թշնամու՝ Թիւրքիայի դէմ մղած կռւում թէ մեր քաղաքի և թէ երկրի ամբողջ ազգաբնակութիւնը կատարեալ համերաշխութեամբ հանդէս կը գայ պաշտպանելու մեր բոլորիս ընդհանուր հայրենիքը և ամեն տեսակի լուրերն ու տեղեկութիւնները թշնամուց ուղարկված, ինչ-որ էմիսարների և նրանց ունեցած ազդեցութեան մասին մասսայի վրա՝ մնում է նրանց ուղարկողների երևակայութեան մէջ։ Կովկասը, ռուսական թագի այդ լաւագոյն ադամանդը, հաւասարապէս իր բոլոր կողերով կանդրադարձնէ թշնամու հարուածը (ծափահարութիւններ)։ Ես դիտմամբ փոխարինեցի Կովկասի սովորական նմանեցումը լաւագոյն մարգարտին, որովհետև ադամանդը նրանից պակաս արժէքաւոր չէ, քանի որ ունի բազմաթիւ կողեր, որքան որ բազմաթիւ են Կովկասում բնակվող ազգերը։ Ես հաւատացած եմ, որ երբեմնի «կորստաբեր» Կովկասը կը դառնայ փրկաբար նրա մէջ բնակվող բոլոր ազգութիւնների համար. ես հաւատացած եմ, որ նրանք բոլորն էլ մէկ անբաժան Մեծ Ռուսաստանի զաւակներն են։ Ես հաւատացած եմ, որ մեր երկրի բոլոր ազգութիւնները «միասիրտ ու միաբերան» մեզ հետ մի սուրբ յաղթութիւն կը մաղթեն մեր ընդհանուր մեծ հայրենիքին ու մեզ բոլորիս միացնող գաղափարը մարմնացնող նրա բարձրագոյն Պետին Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրին Համայն Ռուսաստանի՝ Նիկոլայ Ալէքսանդրովիչին... Ուռա...

Աղաղակներ «ուռա»... Երկարատև ծափահարութիւններ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Տպաւորութիւններ Էջմիածնից

Էջմիածին, 18 հոկտ.

Էջմիածնում ազգաբնակութեան տրամադրութիւնը շատ բարձր է. Իգդիրից և այլ տեղերից գալիս են զանազան տեսակի յուզիչ լուրեր, պատմւում են շշուկներ։ Գիւղի միջով անցնող զօրքին բնակիչները դիմաւորում են հրճուանքով և զօրքին տալիս են ուտելիքներ։

Գէորգեան ճեմարանի վեցերորդ դասարանի աշակերտները ցանկանում էին կամաւոր զինւոր գրվել գործող բանակի մէջ. ճեմարանի վարչութիւնը առաջարկել է նրանց իրանց ծնողների համաձայնութիւնը ստանալ։ Մի քանի ծնողներ հեռագրով հարցապնդում են արել աշակերտների մասին. նրանք կարող են վստահ լինել, որ ճեմարանի վարչութիւնը ամեն միջոց ձեռք կառնէ՝ աշակերտների վիճակը ապահով և անվտանգ կացուցանելու։

Այստեղ սկսվել են խոնաւ եղանակները։ Մասիսները կիսով չափ ձիւնով են ծածկվել։

**

ՎՈԼԳԱՅԻ ԱՓԵՐԻՑ

VIII

Աստրախան, 15 հոկտեմբերի

Երկարատև ճանապարհորդութիւնից յետոյ՝ վերջապէս վերադարձայ Աստրախան։

Ինչպէս ամենուրեք, այնպէս էլ Աստրախանում միակ հետաքրքրութիւնը ներկայացնում է ներկայ պատերազմական դրութիւնը. եթէ նկատվում է մի որևէ հասարակական շարժում աստրախանցիների մէջ՝ այդ միմիայն հէնց պատերազմի շուրջն է։

Թէ քաղաքի և թէ զանազան անհատների կողմից բացվել և շարունակ բացվում են մեծ ու փոքր հիւանդանոցներ. բազմաթիւ կանայք և օրիորդներ հաւաքվում են զանազան հիմնարկութիւններում և մասնաւոր տներում կար ու ձև անելու. մեծ եռանդով կազմակերպվեց «Դրօշակների օրը», որը ունեցաւ մեծ աջողութիւն և տուեց 20,000 ռուբ., այժմ էլ պատրաստութիւն է տեսնվում «Սպիտակեղէնի շաբաթ» կազմակերպելու վերաբերմամբ։

Աստրախանի հայ հասարակութիւնը ևս անտարբեր չէ դէպի ներկայ մեծ պատմական մոմենտը։ Նա թեմ. դպրոցի դահլիճներից մէկում բացել է հիւանդանոց 25 մահճակալով և իր վրա է վերցրել հիւանդանոցի ամբողջ պահպանութիւնը։ Ծխ. ժողովից ընտրված է մի բազմանդամ մասնաժողով, որին և յանձնված է այդ ամբողջ գործը, և այդ մասնաժողովի նախագահն է երդ.-հաւատարմ. Ռ. Աստուածատրեանը, իսկ հիւանդանոցի բժշկական մասի գլխաւոր հսկողութիւնը սիրով յանձն է առել բժ. Նիկ. Լեխանեանը։

Հիւանդանոցի պահպանութեան համար հասարակութիւնը ամսավճար է տալիս, որը հասնում է ամսական մինչև 1000 ր.։

Աստրախանի բոլոր հիւանդանոցները կազմ պատրաստ սպասում են վիրաւորվածների, բայց դեռ վիրաւորվածներ չը կան. ենթադրութիւն կայ, որ մինչև անգամ կարող են բոլորովին էլ վիրաւորվածներ չը բերել, իբրև հեռու վայր, մանաւանդ որ Աստրախանը կարող է հարկաւորվել Թիւրքիայի հետ կռիւ ծագելու դէպքում։

Գալով պատերազմից դուրս միւս հասարակական հարցերին, Աստրախանը նոյն անշարժութիւնն է ներկայացնում, մանաւանդ այժմ. և հասարակութիւնը այժմ իր այդ անտարբերութիւնը պատճառաբանում է ներկայ պատերազմական դրութեամբ։

Ամբողջ 5—6 ամիսներով ծխ. ժողովին դրված հարցերը մնում են անլուծելի։ Թեմ. դպրոցը այս տարի ևս շարունակում է իր ողորմելի դրութիւնը 12—13 աշակերտներով. բայց այս բոլորը մինչև ե՞րբ։

Ս. ք. Ասլանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ, հոկտ. 21-ին, Թագաւոր Կայսրի Գահակալութեան օրվայ առիթով, զինւորական տաճարում հանդիսաւոր պատարագից յետոյ, կատարվեց գոհաբանական մաղթանք։ Ներկայ էին փոխարքայի օգնականներ գեներալ Միշլաեւսկի և հոֆմէյստէր Պետերսօն, գեներալ շտաբի պետը, գեներալիտէտը, նահանգապետը, դումայի իրաւասուներ և այլ պաշտօնական ու քաղաքացիական անձեր։ Նոյն օրը մաղթանքներ կատարվեցին բոլոր դաւանութիւնների աղօթատներում։ Քաղաքը առաւօտից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառութիւն կար։ Այդ օրը խանութները փակ էին մինչև ցերեկ. ժ. 12-ը, իսկ կրթական հաստատութիւններում պարապմունքներ չը կային։ Պատարագը մատուցեց ռուս հոգևորականութիւնը Վրաստանի էկզարխի գլխաւորութեամբ։ Պատարագից յետոյ հոգևորականութիւնը հանդիսաւոր թափօրով, աղօթողների մեծ բազմութեան հետ դիմեց Երևանեան հրապարակ, ուր համաժողովրդական մաղթանք կատարվեց ռուսաց զէնքի ու զօրքի յաղթութեան համար։

◆ Ժուռնալիստների հոկտ. 19-ին կայացած ժողովում որոշվել է նոյեմբերի 3-ին «Մամուլի օր» կազմել պատերազմից վիրաւորվածների օգտին։ Ամբողջ օրը օրիորդներ և տիկիններ կամաւոր կերպով ծախելու են «Кавказскій Журналистъ» թերթի №-երը, հատը 5 կոպէկով. ծախողները դրանից աւելի իրաւունք չունեն վերցնելու։ Բացի այդ, №-ի համար յայտարարութիւններ պէտք է հաւաքվեն։ Ողջ զուտ արդիւնքը ուղարկվելու է պատերազմից վիրաւորվածներին օգնող տեղական կոմիտէտներին։

◆ Թուրքերը կոմսուհի Վօրօնցօվա-Դաշկօվայի անունով սանիտարական մի խումբ են կազմում, որի համար նրանց մէջ հանգանակութիւն է հաւաքվում։

◆ Քաղ. վարչութեան մէջ առանձին հասցէների սեղան է հաստատվում վիրաւոր զինւորների հասցէները իմանալու համար։ Վիրաւորների հասցէակարտերը կը լինեն բոլոր հիւանդանոցներում։

◆ Իրաւասու իշխ. Գ. Մ. Թումանեան 637 կտոր գիրք է նուիրել Թիֆլիսի ազնուականների լազարէթի գրադարանին։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի անօնիմ ընկ. Կարմիր Խաչի տեղական բաժանմունքին է ուղարկել 2267 ր. 58 կ., որ հաւաքվել է էլեքտրաքարշի ծառայողների շրջանում։

◆ Դ. Ա. Խարազեան իր հաշւով պահում է 2 մահճակալ և պատերազմի վիրաւորվածներին նուիրում է 200 րուբլի։

◆ Ինչպէս պարզվում է, վրաց ազնուականութեան քարվանսարային հրդեհից հասած վնասները կազմում են 100,000 ր.։

◆ Այսօր, դումայի տնտեսական յանձնաժողովը քննելու է գոյութիւն ունեցող սակագինը։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Հայկական հիւանդանոցի կանանց նախագահութիւնը խնդրում է բոլոր այն կանանց, որոնք գրվել են որպէս հերթապահ հիւանդապահներ, բարեհաճեն ներկայ լինել այսօր ժամը 1½-ին Կ. Հ. Բ. Ընկերութեան շինութեան մէջ կայանալիք ժողովին, ուր պիտի կազմվի վերջնական ցուցակ և բաժանվեն մուտքի տոմսեր»։

ՄԱՄՈՒԼ

ՄՕՍԿՎԱՅԻ ՑՈՅՑԵՐԻ ՄԱՍԻՆ

«Рус. Вѣд.»-ն Մօսկվայի ցոյցերի ժամանակ տեղի ունեցած ջարդերի մասին գրում է.

«Եւ ցաւալի է, և ամօթալի ընդգծել այսպիսի փաստերը. ամօթ է հայրենի քաղաքի համար, Մօսկվայի համար, «Ռուսաստանի սրտի» համար, ցաւալի է հազար-հազար քաղաքացիների համար, որ վիրաւորված են իրանց հայրենասիրական զգացումների մէջ։ Ցաւալի է և ամօթալի, բայց երգից խօսքերը չես կարող հանել, դառն և անողոք ճշմարտութիւնը չես կարող թագցնել... Մօսկվայի երէկվայ հրճուանքը յաղթութեան առիթով արտայայտվեց փողոցային վայրենի ջարդերով. ուսանողութեան ուրախալի պայծառ ցոյցին, որ կանչվում են պատերազմի դաշտ, միացաւ տականքների խմբակը, և այս սրբազան բոցերին յանդգնեց սառը և խելագար քայլ անելու։

«Ռուսական զօրքի պատւաւոր կռւում տարած յաղթութիւնը յաւերժացնել անմիտ և անամօթ գործով—օտարազգիների խանութների ապակիները ջարդելով—ռուսական պատմութեան ծաղիկների, հայրենիքին կեանք և արիւն նուիրելու մասին արած կանչերին պատասխանել փողոցային ջարդով, ինչպիսի՜ ամօթ... Թող այդ ջարդարարների և տականքների արածը չնչին լինի։ Թող նրանք երէկվայ խենթութեան մտքից զգաստանան և կարմրեն իրանց զուր գործի համար։ Բայց և այնպէս Մօսկվայի տարեգրութեան մէջ մի սև բիծ է մնում։ Նրան մոռանալ չէ կարելի. բայց կարելի է և պէտք է ջնջել։ Պէտք է յիշել, որ երէկվայ բռնագործութիւնը վիրաւորական է ոչ օտարազգիների համար, որ իրանց կեանքը հաւատացել են Մօսկվային, այլ վիրաւորական է իրա Մօսկվայի համար։

«Մայրաքաղաքի հասարակական կարծիքը, նրա բոլոր շերտերի և, առանց խտրութեան, բոլոր կուսակցութիւնների կարծիքը պէտք է սառն և անդառնալի կերպով դատապարտէ երէկվայ ողբալի անցքը, և նրանք այլ ևս չեն կրկնվի։ Եւ որքան ուժեղ, անկեղծ, միահամուռ արտայայտվի այդ դատապարտութիւնը, այնքան աւելի պարզ կը փայլի այն իսկական գործնական հայրենասիրութիւնը, որով այնքան հարուստ է Մօսկվան, որը նրա քաղաքացիներին տալիս է ոյժ իր հայրենիքին նուիրելու իր գոյքն ու կեանքը։ Մօսկովեան այդ պատրիօտիզմը իսկապէս կարող է լեռներ շարժել, բայց քարերից նա ջարդի հրամօթներ չի շինի, այլ ապաստարաններ պատերազմի զոհերի համար»։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 21 հոկտ.

Կ. Հ. Բ. Ը. հայկական հիւանդանոցում 10 վիրաւորեալների պահպանութեան ծախքը՝ մահճակալների կահաւորութիւնների հետ միասին յանձն է առել Գասպար Իվ. Տէր-Մարգարեանը։

Խորհուրդ

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ատամնաբուժարան
հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլօվսկի պր. № 76

Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը առացվում է ըստ հաստատված սակագնի։

Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Բ. Բ. Պիրաղովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։

Բուժարանն ունի կատարելագործված լաբօրատօրիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամնա-տեխնիկական աշխատանքներ և շտապ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։

(օ. մ.) 755. 100—34

„Մշակի" խմբագրատանը
վաճառվում են
հետևեալ վիպական երկերը.
1) ՋՀՈՒԴ ՔՈՒՉԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, Թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիօնի, Թարգմ. Հ. Առաքելեանի . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօյի, Թարգ. Հ. Առաքելեանի— 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, Թարգ. Իս. Յարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, Թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ վէպ. Ց. Սօլօվեանի . . . . — 40 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղջ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով, պահանջողներին կը լինի միմիայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(5) 0—3

Թանդոյեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը
ԱՃՈՒՐԴՈՎ
տալիս է երկու կալուածք. մէկը՝ եկեղեցու շուրջը (Միխայլովսկի պր. № 38) միւսը Անդրէեվսկի փողոցի վրա՝ № 26։

Աճուրդը նշանակված է հոկտեմբերի 26-ին, կիրակի, ժամը 12-ին, դպրոցի շինութեան մէջ։ Մանրամասն պայմանների հետ ծանօթանալու համար դիմել պ. Ռոստոմ Տէր-Կարապետեանցին՝ Վօրօնցօվի արձանի դիմաց՝ իր խանութում։

Աճուրդին մասնակցողները վաղօրօք պէտք է ներկայացնեն գրաւական՝ առաջին կալուածքի համար 500 ռուբ., երկրորդի համար 200 ռուբլի։

Նախագահ հոգաբարձութեան՝ Յարութիւն ք. Ծուղուրեանց

(ու.) 947. 2—1

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный